«ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Նպատակը

Ուղեցույցի նպատակն է աջակցել ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին՝ տրամադրելով մասնագիտական նյութ, որը կօգնի նրանց հասկանալու, թե ինչ է երեխաների հանդեպ բռնությունը, որոնք են դրա մասին վկայող նշանները, պատկերացում կազմելու երեխաների պաշտպանության համակարգի և այն մասին, թե ինչպես արդյունավետ կերպով հայտնաբերել, արձագանքել և կանխարգելել երեխաների հանդեպ բռնության դրսևորումները:

Խնդիրները

- Ճանաչել երեխաների հանդեպ բռնության դրսևորումները, ռիսկի գործոնները:
- Հասկանալ երեխաների պաշտպանության մեխանիզմները և հիմնական սկզբունքները:
- Հասկանալ համակարգված մոտեցման առավելությունները երեխաների պաշտպանությունն իրականացնելիս:
- Պատկերացում կազմել Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի հիմնական առանձնահատկությունների, բնույթի մասին:
- Պատկերացում կազմել տարբեր մակարդակներում աջակցող գործոնների ուժեղացման և առկա ռիսկային գործոնների նվազեցման հնարավոր եղանակների մասին:
- Պատկերացում կազմել երեխաների հանդեպ բռնության կանխարգելումն արդյունավետ կազմակերպելու եղանակների մասին:
- Պատկերացում կազմել հայտնաբերված բռնության դեպքերի մասին հայտնելու/տեղեկացնելու վերաբերյալ:
- Հասկանալ միջգերատեսչական համագործակցության կարևորությունը և դրա անհրաժեշտությունը բռնության դեպքերին արդյունավետ արձագանքելու նպատակով:

Ուղեցույցի մշակումը

Այս ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Այս ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու է միայն ՀՀ ԿԳՄՍՆ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Ուղեցույցը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՍՆ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ համատեղ «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» (CLASS) ծրագրի շրջանակներում:

«Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» (CLASS) ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ և իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մանկական զարգացման հիմնադրամի, Կանանց աջակցման կենտրոնի և «ԱՌՆԱՊ» հիմնադրամի կողմից: Ծրագիրն ուղղված է հզորացնելու Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգը արդյունավետ համայնքային սոցիալական աշխատանքի միջոցով և բարելավելու առավել խոցելի երեխաների և նրանց ընտանիքների կյանքը:

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Արաքսիա Սվաջյան

Ուղեցույցի հեղինակներ՝

Քրիստինե Միխաիլիդի

Ալինա Մանուկյան

Հաստատված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

1. Ճանաչում ենք երեխաների հանդեպ բռնությունը (ԵՀԲ) 6

Ի՞նչ է բռնությունը 6

Բռնության տեսակները 7

Բռնության նշանները 10

2. Երեխաներին բռնությունից պաշտպանելու հիմնական սկզբունքները 14

3. Անվտանգ և բռնությունից պաշտպանված միջավայրի ստեղծում 17

Երեխային շրջապատող միջավայրը 17

Ռիսկի և պաշտպանիչ գործոնները 18

4. Նպաստում ենք երեխայի զարգացմանն ու աճին՝ բացահայտելով ներքին ու արտաքին զարգացնող նախադրյալները 22

5. Արձագանքում ենք բռնության դեպքերին 26

5.1 Արձագանքման քայլերը 27

5.2 Տարիքային առանձնահատկությունները, բռնության հետևանքները և արձագանքման առանձնահատկությունները 28

5.3 Բռնության փաստի մերժման հիմնական պատճառները 31

5.4 Բռնության ենթարկված երեխաներին տրամադրվող աջակցության հոգեբանական առանձնահատկությունները 31

5.5 Բռնության ենթարկված երեխայի հետ զրույցի վարման առանձնահատկությունները 34

Հավելված 1. Զարգացման 40 նախադրյալ 38

Հավելված 2. Երեխաների պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի ցանկը 46

Հավելված 3. ԵՀԲ մասին հաղորդման գործընթացի գծապատկերի օրինակ 50

Հավելված 4. ԵՀԲ դեպքերի արձագանքման պատրաստվածության պլանի օրինակ 51

Ներածություն

Երեխաների պաշտպանությունը ներառում է այն բոլոր միջոցները, որոնք ձեռնարկվում են՝ արձագանքելու և կանխարգելելու երեխաների շահագործումը, անտեսումը, չարաշահումը և երեխաների հանդեպ բռնության բոլոր այլ ձևերը:

Այս ուղեցույցը կօգնի ուսումնական հաստատությունների մասնագետներին ծանոթանալ երեխաների պաշտպանության հետ կապված հիմնական հասկացություններին և սկզբունքներին, հասկանալ, թե ինչ է նշանակում համակարգված մոտեցում ցուցաբերել երեխաների պաշտպանությանը և ինչպես ստեղծել անվտանգ միջավայր ուսումնական հաստատությունում բոլոր տղաների և աղջիկների, հատկապես խոցելի խմբերի համար: Այս ուղեցույցի միջոցով մասնագետները հնարավորություն կունենան պատկերացնել, թե ինչպես բարելավել երեխաների հանդեպ բռնության կանխարգելման աշխատանքները, նաև՝ ինչ քայլեր ձեռնարկել և ուր դիմել երեխայի հանդեպ բռնության հայտնաբերման դեպքում:

Անհրաժեշտ է, որպեսզի ուսումնական հաստատության բոլոր երեխաները պաշտպանված լինեն, հնարավորություն ունենան լիարժեք զարգացնել իրենց ողջ ներուժը և հաջողությունների հասնեն իրենց կյանքում: Այդ նպատակով կարևոր է մշտադիտարկել երեխային շրջապատող միջավայրը՝ երեխաների հանդեպ բռնությունը բացահայտելու, բռնությանն արձագանքելու և բռնության դեմ պայքարելու համար, քանի որ յուրաքանչյուր երեխա պաշտպանված լինելու իրավունք ունի և արժանի է ապրելու բռնությունից զերծ միջավայրում:

Պետության պարտավորությունները՝ երեխաներին պաշտպանելու բռնության բոլոր ձևերից, բխում են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք կոնվենցիաներից, այդ թվում՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայից, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից, Եվրոպայի խորհրդի Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին կոնվենցիայից, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայից, ինչպես նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից: Միջազգային իրավական կարգավորումները, ինչպես նաև երկրի հիմնական օրենքը հանդիսանում են այն հիմնաքարերը, որոնց հիման վրա պետք է կառուցել երեխաներին բռնության բոլոր ձևերից պաշտպանող ազգային իրավական գործուն համակարգ՝ համադրելով տեղային առանձնահատկությունները և միջազգային լավագույն փորձը:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությամբ[1] արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

[1] Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165162
ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66138

Երեխաների պաշտպանությունը կարգավորվում է ՀՀ մի շարք օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջոցով *(դաշտը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի ցանկը տես Հավելված 2-ում):*

Ինչու՞ է անհրաժեշտ լինել զգոն և մշտադիտարկել իրավիճակը:

Բռնության ենթարկված երեխաների մոտ կարող են առաջանալ.

- առողջական խնդիրներ, այդ թվում՝ քրոնիկ հիվանդություններ և դրանց սրացումներ,
- հասակակիցների և մեծահասակների հետ առողջ հարաբերություններ ստեղծելու և պահպանելու դժվարություններ,
- ուսման առաջադիմության անկում,
- վախեր, մեղքի զգացում իրենց հետ պատահածի վերաբերյալ,
- կրթությունից դուրս մնալու ռիսկ,
- թմրանյութերի, ալկոհոլի օգտագործման ռիսկեր:

Կարևոր է հաշվի առնել նաև, որ երեխաները հաճախ իրավիճակները չեն ընկալում որպես բռնություն կամ տարբեր պատճառներով փորձում են թաքցնել այդ փաստը: Ուսումնական հաստատության շրջանակում մշտադիտարկումը հնարավորություն է տալիս առավել արագ հայտնաբերել բռնության հնարավոր դեպքերն ու խուսափել հնարավոր բարդացումներից:

Ինչո՞ւ է դժվար երեխաների հանդեպ բռնության դեպքերի հայտնաբերումը, արագ լուծումներ տալը:

Մշտադիտարկման կանոնավոր իրականացումը կարևոր է, քանի որ բռնության դեպքերը հաճախ դժվար է հայտնաբերել հիմնականում այն պատճառով, որ.

- Բռնություն իրականացնողները հաճախ ընտանիքի անդամներն են կամ նրանք, ում երեխաները լավ ճանաչում ու վստահում են:
- Երեխաները վախից և ամոթի զգացումից չեն բարձրաձայնում խնդիրների մասին:
- Բռնության որոշ ձևեր հանդուրժելի են հասարակության կողմից և ընկալվում են որպես մշակութային նորմեր:
- Բռնության դեպքի մասին հայտնելը/տեղեկացնելը, բարձրաձայնելը հաճախ անտեսվում է, քանի որ երեխաների պաշտպանության մեխանիզմները բավարար արդյունավետ չեն՝ մասնագետների վերապատրաստման, աջակցության տրամադրման և կարողությունների զարգացման համար բավարար ֆինանսական միջոցներ առկա չեն:

Կարևո՛ր է.
Երեխայի հանդեպ բռնության որևէ նշանի կամ հաղորդման դեպքում անհրաժեշտ է անհապաղ ձեռնարկել համապատասխան քայլեր՝ դիմելով Երեխաների պաշտպանության համակարգի համապատասխան մարմիններին:

1. Ճանաչում ենք երեխաների հանդեպ բռնությունը (ԵՀԲ)

Երեխաների և երեխաների պաշտպանության մասին որոշ համոզմունքներ միֆեր են, կարծրատիպեր: Կարևոր է, որ ուսումնական հաստատության աշխատակիցները կարողանան տարբերակել փաստերը միֆերից/կարծրատիպերից, հստակ պատկերացում ունենան այն մասին, թե ինչն է երեխայի հանդեպ բռնություն, որպեսզի կարողանան իրենց կարևոր ներդրումն ունենալ երեխաների պաշտպանության գործընթացում:

Կարծրատիպային որոշ մոտեցումներ դեռ շարունակում են կենսունակ մնալ Հայաստանում, օրինակ.

- Դժվար, անկարգ երեխաներին հարկավոր է ավելի շատ պատժել:
- Հաշմանդամություն ունեցող երեխաներին պետք է մեկուսացնել մյուս երեխաներից, որպեսզի մյուսները չկրկնօրինակեն նրանց «վատ» վարքը:
- Երեխաները նորից նույն սխալը չեն անի, եթե մի լավ ծեծ ուտեն, ապտակ ստանան:
- Երեխաները միշտ գիտեն, թե ինչու են իրենց պատժում:
- Աղջկան հարկավոր է շուտ ամուսնացնել, թե չէ տանը կմնա:

Փաստեր՝

- ❑ Երեխաների հանդեպ բռնությունը համաշխարհային խնդիր է:
- ❑ Ինչպես աղջիկները, այնպես էլ տղաները կարող են բռնության զոհ դառնալ:
- ❑ Երեխաները սովորաբար ճանաչում են բռնություն գործադրած անձին:
- ❑ Երեխաների նկատմամբ բռնությունների մեծ մասը գործադրվում է ծնողների/խնամակալների և ուսուցիչների, վստահության շրջանակի մեջ ներառվող այլ անձանց կողմից:
- ❑ Բռնություն գործադրող անձինք կարող են ընկերանալ զոհերի և նրանց ընտանիքների հետ:
- ❑ Երեխաները միշտ չէ, որ բարձրաձայնում են, որ բռնության են ենթարկվել:
- ❑ Երեխաների հանդեպ բռնությունը օրենքի խախտում է:
- ❑ Ծնողների/խնամակալների և ուսուցիչների դերը անչափ կարևոր ու մեծ է երեխաների համար անվտանգ և պաշտպանող միջավայր ապահովելու գործընթացում:

Ի՞նչ է բռնությունը

Երեխաների հանդեպ բռնությունը ցանկացած գործողություն է (կամ անգործությունը), որը պատահական բնույթ չի կրում, վնաս է պատճառում երեխայի կյանքին, նրա ֆիզիկական և հոգեկան առողջությանը, արժանապատվությանը և/կամ վտանգի տակ է դնում երեխայի զարգացումը և նրա բնական կենսագործունեությունը:

Հիմնականում առանձնացվում են երեխայի հանդեպ բռնության հետևյալ տեսակները՝

- ֆիզիկական բռնություն
- հոգեբանական բռնություն

- անտեսում կամ չարաշահում
- սեռական բռնություն:

Ցանկացած տարիքի երեխա կարող է ցանկացած տեսակի բռնության զոհ դառնալ, ինչպես նաև կարող է միաժամանակ մեկից ավելի տեսակի բռնության ենթարկվել:

Բռնության տեսակները

Ֆիզիկական բռնությունը այն գործողություններն են, որոնք ֆիզիկական ներգործություն, վնաս, ցավ, վնասվածք կամ խեղում են պատճառում երեխային: Այդ գործողությունները ներառում, բայց չեն սահմանափակվում այնպիսի արարքներով, ինչպիսիք են հրելը, հարվածելը, ապտակելը, ծեծելը, խեղդելը, առողջությանը տարբեր աստիճանի վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը: Ֆիզիկական բռնությունը ներառում է խոշտանգման բոլոր ձևերը:

Հոգեբանական բռնությունը երեխայի ինքնության, ինքնագնահատականի վրա ճնշում գործադրելն է, նրան հոգեկան տառապանք պատճառելը: Հոգեբանական բռնություն է արժանապատվության նվաստացումը, վերահսկողության կամ հսկողության սահմանումը, արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումը, երեխայի կրթության իրավունքի սահմանափակումը, սպառնալիքը, այդ թվում՝ արատավորող տեղեկատվություն հրապարակելու սպառնալիքը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկատվությունն իրականությանը համապատասխանում է, թե՝ ոչ: Ներառում է նաև երեխայի նկատմամբ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, կամ այնպիսի գործողությունները, որոնք հիմնավոր վախ են առաջացնում երեխայի կամ նրա ընտանիքի անդամների անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին:

Հոգեբանական բռնության գործողությունները ներառում են երեխային անընդհատ քննադատելը, նրա վրա բղավելը, ծաղրը, վիրավորանքը, նսեմացումը (օրինակ, վատ, անպատշաճ խոսքեր ասելը, անհարմար/ամոթալի/ծիծաղելի վիճակի մեջ դնելը և այլն), անտեսելը, բուլինգի ենթարկելը, երեխային փակի տակ պահելը կամ նվաստացնող պայմաններում նրան մեկուսացնելը, պարբերաբար ասելը, որ նրան չեն սիրում, երեխային ահաբեկելը կամ նրա նկատմամբ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով առցանց ոտնձգություններ իրականացնելը (օրինակ, սոցիալական ցանցի՝ երեխայի էջ մուտք գործելը առանց նրա թույլտվության), երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնության կիրառումը, օրենքով սահմանված տարիքային պայմանների խախտմամբ երեխային ամուսնացնելը:

Անտեսում - երեխայի (ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից) երեխայի կեցության անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելը, եթե դրանք ապահովելու հնարավորությունն առկա է:

Անտեսումը դրսևորվում է այնպիսի հիմնական կարիքների չապահովմամբ, ինչպիսիք են սնունդը, կացարանը, հագուստը, երեխայի անվտանգությունը և այլն:

Բժշկական անտեսման դրսևորում կարող է լինել, օրինակ՝ ծանր հիվանդություն ունեցող երեխայի համար բժշկական օգնության չդիմելը:

Հուզական անտեսման օրինակ կարող է լինել կարեկցանքի, ապրումակցման, ջերմության արտահայտման, զարգացման խթանման և խրախուսման հուզական կապի բացակայությունը:

Կրթության իրավունքի անտեսում է պարտադիր դպրոցական տարիքում երեխային դպրոցում չգրանցելը, երեխային դպրոց չտանելը/չուղարկելը:

Սեռական բռնություն - սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելը կամ դրանց փորձը, որոնք կատարվել են 16 տարին չլրացած անձի նկատմամբ, կամ նույն գործողությունները 16-18 տարեկանների նկատմամբ, որոնք կատարվել են անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ նրա կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ անօգնական վիճակն օգտագործելով:

Սեռական բռնության դրսևորում է նաև պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ տեսաֆիլմի նյութ, էլեկտրոնային կրիչի վրա պահվող նյութ, պատկեր կամ պոռնկագրական բնույթի այլ առարկա 16 տարին չլրացած անձանց շրջանում տարածելը, ցուցադրելը, 16 տարին չլրացած անձի ներկայությամբ սեռական հարաբերությունը, մերկանալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություն կատարելը, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի զրույցը կամ 16 տարին չլրացած անձի մեջ սեքսուալ բնույթի ցանկություն առաջացնելուն ուղղված այլ արարքը:

Բուլինգ - երեխայի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելով՝ մեկ կամ մի քանի անձանց կողմից պարբերաբար դիտավորյալ բացասական (տհաճ կամ վիրավորական) վարքագիծ, որն իրականացվում է գործողությունն իրականացնողի թվացյալ կամ իրական առավելությունն ու արտոնություններն ամրապնդելու նպատակով, բանավոր կամ գրավոր արտահայտությամբ, ֆիզիկական կամ հոգեբանական բռնության գործադրմամբ, ներառյալ՝ կիբերբուլինգը, որն իրականացվում է առցանց միջավայրում՝ էլեկտրոնային սարքավորումների, այդ թվում՝ համակարգիչների, բջջային հեռախոսների և էլեկտրոնային այլ սարքերի օգտագործմամբ:

Շահագործում - երեխայի կողմից ցանկացած գործողության կատարում կամ ծառայության մատուցում երրորդ անձանց կողմից դրամական կամ այլ տեսակի օգուտ ստանալու նպատակով կամ առանց դրա, ինչպես նաև երեխային ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, պոռնկության, պոռնկագրական նյութերի կամ առարկաների արտադրության մեջ ներգրավելը, երեխայի բջջի, հյուսվածքի, օրգանի կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների առուվաճառքը, երեխային մուրացկանության կամ այլ հակասոցիալական, հակահիրավական գործունեության մեջ ներգրավելը, երեխային աշխատանքի վատթարագույն ձևերի մեջ ներգրավելը:

Շահագործումը ներառում է նաև երեխաների թրաֆիքինգը[2], երեխային զինված ուժերում ներգրավելը:

Կարևո՛ր է.
Երեխաների հանդեպ բռնության ձևերի որոշ սահմանումներ առկա են նաև ՀՀ օրենսդրության մեջ, հատկապես «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում:[3]

[2] Թրաֆիքինգը մարդկանց ստրկական, սեռական, բռնի և չնչին վարձատրությամբ աշխատանքի տեսքով անօրինական շահագործումն է:
[3] «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165162
«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք.
arlis.am/documentview.aspx?docID=118672&fbclid=IwAR15Jara4KJ_MdSWTHUrLoJU3vk485mGsxgrmiZ3MpK4P--i3y-EMNCNZRk

Բռնության նշանները

Արտաքին տեսքի, ինչպես նաև պահվածքի հետ կապված որոշ նշաններ կարող են հուշել, որ երեխայի հանդեպ բռնություն է տեղի ունեցել: Կարևոր է ճանաչել բռնության, անտեսման կամ չարաշահման նշանները, որպեսզի հնարավոր լինի քայլեր ձեռնարկել երեխաներին բռնությունից պաշտպանելու համար:

Ընդհանուր նշաններ՝

Երեխա	Ծնող կամ խնամակալ	Երեխա, ծնող կամ խնամակալ
• Վարքի կամ ուսման մեջ ցուցաբերում է հանկարծակի փոփոխություն : • Ունի ուսման խնդիրներ, որոնք ֆիզիկական կամ ինտելեկտուալ դժվարություններով պայմանավորված չեն: • Շուտ է գալիս դպրոց, երկար է մնում և չի ցանկանում տուն գնալ (հիմնականում երբ բռնությունը դպրոցից դուրս է): • Երեխան ունի ֆիզիկական և/կամ առողջական խնդիրներ, որոնք ներկայացվել են ծնողների ուշադրությանը, բայց լուծում չեն ստացել: • Միշտ լարված է, տագնապած, կարծես պատրաստվում է մի վատ բանի: • Չափից դուրս լսող ու հնազանդ է, չափից դուրս կամ չափազանց պատասխանատու:	• Երեխայի նկատմամբ նվազ անհանգստություն է ցուցաբերում, հազվադեպ է արձագանքում ծնողներին ուղղված հարցադրումներին կամ տնայցերին: • Երեխայի վտանգածին վարքը թողնում է առանց հսկողության: • Մեղադրում է երեխային դպրոցում կամ տանը ունեցած խնդիրների համար: • Երեխային բեռ է համարում, չի արժևորում: • Երեխայի նկատմամբ պահանջները բացարձակապես չեն համապատասխանում նրա իրական հնարավորություններին և անտեսում են երեխայի ջանքերը և կարիքները:	• Հազվադեպ են գրկում իրար, նայում միմյանց: • Ունեն լարված կամ կոնֆլիկտային հարաբերություններ, արտահայտում են հակակրանք միմյանց հանդեպ:

Կարևո՛ր է.

Այս նշաններից ոչ մեկը չի ապացուցում, որ առկա է երեխայի հանդեպ բռնություն: Երբ այս նշաններն ի հայտ են գալիս բազմիցս կամ համակցված, անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրել իրավիճակը՝ երեխայի նկատմամբ բռնության հավանականությունը դիտարկելու համար: Ավելի խորը ուսումնասիրությունը կարող է բացահայտել երեխայի շահագործման կամ նրա հանդեպ բռնության որոշակի տեսակի նշաններ: Խորհուրդ է տրվում նաև խորհրդակցել երեխաների պաշտպանության մասնագետի հետ:

Ֆիզիկական բռնության նշանները կարող են արտահայտվել հետևյալ կերպ.

Երեխա	Ծնող կամ խնամակալ
• Արյունազեղումներ, վերքերի հետքեր, քերծվածքներ, պատռվածքներ, ծխախոտի մնացորդից առաջացած այրվածքներ, կոտրվածքներ, կապտուկներ մարմնի վրա • Ինքնավնասող վարքագիծ • Ինքնամփոփություն/կաշկանդվածություն, կպչուն մտքեր/գործողություններ • Հուզական պոռթկումներ, ագրեսիվության դրսևորումներ • Խուսափում ֆիզիկական շփումից • Եղանակին չհամապատասխանող հագուստի կրում մարմնի մասերը քողարկելու նպատակով • Քայլելու, տեղաշարժվելու դժվարություններ, ցավերի առկայություն • Տագնապի դրսևորումներ, անընդհատ սպասում ինչ-որ վատ իրադարձության:	• Հաճախ իրարամերժ, ոչ համոզիչ բացատրություններով է հիմնավորում երեխայի վնասվածքները: • Երեխային նկարագրում է որպես «չարիք» կամ այլ բացասական ձևակերպումներով: • Օգտագործում է բռնություն պարունակող դաստիարակման միջոցներ: • Մանուկ հասակում բռնության ենթարկվելու պատմություն ունի:

Սեռական բռնության նշանները կարող են ներառել՝

Երեխա	Ծնող կամ խնամակալ
• Սեռական օրգանների շրջանում կարմրություն/քրոնիկ քոր • Անհանգստություն/դժվարություն քայլելիս կամ նստելիս • Մղձավանջներ, գիշերամիզություն • Ինքնավնասման փորձ, փախուստ տանից • Ախորժակի պակաս կամ չափից շատ ուտելը • Ցածր ինքնագնահատական և հուզական դրսևորումներ (պարբերաբար լաց լինելը, ամաչկոտությունը և այլն) • Բացահայտ սեռական վարքագիծ, խաղ կամ խոսակցություն, որը չի համապատասխանում երեխայի տարիքին • Դեպրեսիա, վարքի հանկարծակի փոփոխություններ, մեկուսացված վարքագիծ • Անհանգիստ շարժումներ, տարբեր վախեր, կենտրոնանալու դժվարություններ դասի ընթացքում, ագրեսիվություն • Հրաժարում մարզասրահ հաճախելուց, հագուստը փոխելուց կամ ֆիզիկական ակտիվության պարապմունքներին մասնակցելուց • Եղանակին չհամապատասխանող հագուստ կրելու սովորություն (հաճախ մի քանի շերտ) • Հղիություն կամ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն	• Չափից դուրս պաշտպանում է երեխային կամ խիստ սահմանափակում է երեխայի շփումը այլ, հատկապես հակառակ սեռի երեխաների հետ: • Մեկուսացված է: • Խանդում է կամ վերահսկում ընտանիքի անդամներին: • Մեղքի և ամոթի զգացում է ներշնչում երեխային կամ անընդհատ մեղադրում ու նախատում է նրան: • Մանուկ հասակում բռնության ենթարկվելու պատմություն ունի:

• Սեռական բռնության մասին հայտնելը ծնողի կամ մեկ այլ չափահաս խնամակալի կողմից • Մեղքի, ամոթի զգացում • Վախ, խուսափում բժշկական օգնությունից:	

Հոգեբանական բռնության նշանները կարող են ներառել՝

Երեխա		Երեխա, Ծնող/խնամակալ
• Դրսևորում է վարքագծային ծայրահեղություններ, հակասական վարք, օրինակ՝ չափից դուրս հնազանդ կամ պահանջկոտ, չափազանց պասիվ կամ ագրեսիվ վարք: • Անհամապատասխան վարք է ցուցաբերում՝ նմանակելով մեծահասակներին: Օրինակ՝ ծնողի դեր է ստանձնում այլ երեխաների նկատմամբ կամ չափից դուրս մանկամիտ է պահում իրեն, օրինակ՝ ճոճվում է, մատը ծծում , հարվածում գլխին և այլն: • Չափազանց անտարբեր է իր շուրջը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: • Տագնապած է , վախվորած, վախենում է ինչ-որ բան սխալ անելուց:	• Հաղորդակցման դժվարություններ, խոսքի հանկարծակի խանգարումներ • ֆիզիկական զարգացման դանդաղում, խոսքի և հոգեկան զարգացման հապաղում • Առողջական վիճակի վատթարացում • Վատ սովորություններ • Հակասոցիալական կամ բացասական վարքագիծ • Նյարդային խանգարումներ • Ինքնասպանության հետ կապված մտքեր, ինքնասպանության փորձ (հատկապես դեռահասների դեպքում) • Ցածր ինքնագնահատական • Հուզական կապերի բացակայություն կամ թույլ հուզական կապեր ծնողի/խնամակալի հետ:	• Անընդհատ մեղադրում, նսեմացնում կամ նախատում է երեխային: • Անհանգստացած չէ երեխայի համար և հրաժարվում է քննարկել երեխայի խնդրին օգնելու առաջարկները: • Բացահայտորեն մերժում է երեխային: • Գերխնամքը: • Մանուկ հասակում բռնության ենթարկվելու պատմություն ունի:

Անտեսման նշանները կարող են ներառել՝

Երեխա		Երեխա, Ծնող/ խնամակալ
• Ֆիզիկական աճի և առողջության հետ կապված խնդիրներ, թերսնվածություն • Ֆիզիկական/մտավոր զարգացման դանդաղում, խոսքի և հոգեկան զարգացման հապաղում • Գողություն, մուրացկանություն • Թմրամոլություն, ալկոհոլի չարաշահում • Անձնական հիգիենայի բացակայություն, ներառյալ անխնամ տեսք, մազեր, կեղտոտ հագուստ:	• Եղանակին անհամապատասխան հագուստ • Քրոնիկ հոգնածություն, հյուծվածություն, թուլություն, քնկոտություն, կենտրոնանալու դժվարություններ կամ անկարողություն • Լքվածություն , երկար ժամանակ պատշաճ ուշադրության և խնամքի բացակայություն • Հաճախակի հիվանդություններ, քրոնիկ հոսպիտալացում • Հաշմանդամություն, մահ:	• Արտաքուստ անտարբեր է երեխայի նկատմամբ: • Թվում է տագնապած կամ ընկճված: • Գործողությունները տրամաբանված չեն: • Հակված է թմրամոլության, ալկոհոլի չարաշահման:

Կարևո՛ր է.

- ✓ Երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերը կարող են ունենալ կարճաժամկետ և երկարաժամկետ բացասական հետևանքներ երեխաների բարեկեցության և առողջության վրա:
- ✓ Ուսումնական հաստատության անձնակազմը պետք է կարողանա ճանաչել անտեսման, բռնության և չարաշահման նշանները, որպեսզի հայտնաբերենք ԵՀԲ դեպքերը և քայլեր ձեռնարկենք երեխաներին պաշտպանելու համար:

  Մենք ի պաշտոնե պարտավոր ենք դա անել:
- ✓ Չարաշահման կամ բռնության նշաններն ու վարքագիծը, որը մենք նկատում ենք, վստահ ցուցումներ չեն, որ տեղի է ունեցել բռնություն. անհրաժեշտ է հետաքննություն համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Սակայն անգամ չնչին կասկածի պարագայում անհրաժեշտ է հայտնել դեպքի մասին:
- ✓ Երեխաների և երեխաների պաշտպանության մասին որոշ համոզմունքներ միֆեր/կարծրատիպեր են, իսկ մյուսները՝ փաստ:

2. Երեխաներին բռնությունից պաշտպանելու հիմնական սկզբունքները

Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում իրականացնելիս և դեպքերին արձագանքելիս կարևոր է հետևել որոշակի սկզբունքների, քանի որ պատշաճ արձագանքման աշխատանքները բարդ են և պահանջում են երկարաժամկետ աջակցություն:

Աղյուսակում ներկայացված ուղղորդող հարցերն օգտակար կլինեն սկզբունքները համապատասխանորեն կիրառելու համար:

Երեխաներին բռնությունից պաշտպանելու հիմնական սկզբունքները	**Ուղղորդող հարցեր՝ համոզվելու, որ գործողությունները կամ միջամտություններն իրականացվում են՝ հաշվի առնելով երեխայի պաշտպանության հիմնական սկզբունքները**
Երեխայի լավագույն շահն ապահովելը Երեխայի լավագույն շահի պաշտպանությունը ներառում է բոլոր այն պայմանների համակցումը, որոնք անհրաժեշտ են նրա հիմնարար կարիքների բավարարման համար՝ սկսած ֆիզիկական պայմաններ ստեղծելուց մինչև դաստիարակություն, պաշտպանություն, երեխայի հիմնական արժեհամակարգի ձևավորում, նրա իրավունքների իրացում տվյալ մշակույթի համատեքստում: Երեխայի լավագույն շահից բխող որոշման կայացման գործընթացում պետք է ընդգրկված լինի հենց ինքը՝ երեխան, և նրա կարծիքը պետք է հաշվի առնել իր տարիքային առանձնահատկություններին ու հասունության մակարդակին համապատասխան: Յուրաքանչյուր երեխայի ընդունում ենք որպես եզակի և առանձնահատուկ, ով ունի բռնությունից պաշտպանված լինելու իրավունք:	• Արդյո՞ք բավարարված են երեխայի հիմնական կարիքները: • Ի՞նչ ազդեցություն կունենա մեր որոշումը/միջամտությունը երեխայի ֆիզիկական, հուզական, ճանաչողական և սոցիալական զարգացման վրա: • Ի՞նչ ռեսուրսներ են առկա, որոնք կարող են օգնել երեխային լուծելու այս խնդիրը: • Օգտագործելով համայնքային ռեսուրսները՝ արդյո՞ք չենք վնասի երեխային հետագայում: • Կարո՞ղ է արդյոք երեխան մեր միջամտության պատճառով խտրականության ենթարկվել: • Արդյո՞ք հաշվի ենք առել երեխայի բարեկեցությունը, եթե երեխան շարունակի մնալ ներկայիս կենցաղային պայմաններում: • Ի՞նչ ազդեցության և/կամ ռիսկեր կան, եթե դեպքի մասին հաղորդվի երեխաների պաշտպանության համապատասխան ստորաբաժանումներին: Պատրա՞ստ ենք արդյոք հետևանքներին: • Արդյո՞ք երեխայի ընդգրկումը որոշումների կայացման գործընթացին կարող է որոշակի ռիսկեր առաջացնել նրա համար: • Խոսե՞լ ենք արդյոք երեխայի հետ այն մասին, թե ինչ որոշումներ են կայացվել, և ինչ քայլեր են ձեռնարկվելու: • Արդյո՞ք խոսել և հաշվի ենք առել երեխայի կարծիքը:

	• Արդյո՞ք երեխան կարողություններ ունի մասնակցելու միջամտության հետ կապված որոշումների կայացման գործընթացին: • Արդյո՞ք մեր որոշումը և պլանավորվող միջամտությունները կարող են որևէ ազդեցություն ունենալ տվյալ համայնքի մշակութային առանձնահատկությունների վրա:
Խտրականությունից զերծ մնալը Համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն պետության բոլոր դերակատարների, հաստատությունների, կազմակերպությունների, լիազոր մարմինների կողմից՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խտրականության կամ պատժի բոլոր ձևերից, անկախ նրա/ընտանիքի կարգավիճակից, գործունեության բնույթից, արտահայտած կարծիքից, համոզմունքներից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքներից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:	• Դեպքի հետ կապված՝ ո՞վ է խտրականության ենթարկվում: Ինչո՞ւ: • Ո՞րն է խտրականության պատճառը: • Ինչպե՞ս կարող ենք կանխարգելել և/կամ վերացնել խտրականությունը:
Չվնասելը Չվնասելու սկզբունքը երեխայի հետ աշխատանքի հիմնարար սկզբունք է, որը ներառում է ցանկացած միջամտության պարագայում հետևանքները հաշվի առնելը, երեխայի կյանքին և առողջությանը վերաբերող հարցերում ռիսկերի կառավարումը և կանխումը, Հատկապես երեխայի՝ ծնողից կամ խնամակալից բաժանելու, ընտանիքից հեռացնելու պարագայում վնասի/ցավի մեղմացմանն ուղղված առաջնային քայլեր ձեռնարկելը, Իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ երեխայի անվտանգության ապահովմանն ուղղված քայլեր ձեռնարկելը:	• Արդյո՞ք առաջարկվող գործողությունը տևական կամ մշտական արդյունք է ապահովելու: Եթե ոչ, ի՞նչ ազդեցություն կունենա երեխայի վրա, երբ նախատեսված գործողությունը դադարի: • Արդյո՞ք գործողությունը երեխայի համար հետագա ռիսկ չի ստեղծի: • Ինչպե՞ս ներգրավել ընտանիքը և համայնքը երեխայի վրա ազդող որոշումների ընդունմանը: • Ինչպե՞ս երեխային հաղորդել տարիքին համապատասխան տեղեկատվություն և նրան ներգրավել իր ապագայի վրա ազդող որոշումների ընդունման գործընթացին:
Ընտանեկան միջավայրին առաջնայնություն տալը Անհրաժեշտ գործողությունների իրականացում՝ հիմնված ընտանիքում հարաբերությունների, կարիքների, առաջնայնությունների և նախընտրությունների վրա: Պետք է հաշվի	• Ինչպես կգնահատեք ընտանիքի կարիքներն ու նախընտրությունները՝ հաշվի առնելով երեխայի անվտանգությունն ու պաշտպանությունը:

առնել, որ երեխայի ապրելու լավագույն վայրը ընտանիքն է:	
Գաղտնիությունն ապահովելը Երեխայի և նրա ընտանիքի հետ կապված տեղեկատվությունը պահանջում է մասնագիտական էթիկա և գաղտնիության պահպանում: Գաղտնիությունը երաշխավորվում է, երբ տեղեկատվությունը փոխանցվում է միայն նրանց, ովքեր իրավունք ունեն ի պաշտոնե աշխատել դեպքի հետ բացառապես երեխայի լավագույն շահի ապահովման նպատակով: Գաղտնիությունը վերաբերում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տեղեկատվությանը, տվյալներին, գրառումներին և, ընդհանուր առմամբ, դեպքի փաստագրմանը և վարմանը:	• Ինչպե՞ս եք համոզվում, որ երեխայի ինքնությունը պաշտպանված է: • Ինչպե՞ս կարող եք ապահովել գաղտնիությունը և միաժամանակ՝ համապատասխան մասնագետների և կառույցների ներգրավումը: • Ո՞ր մասնագետներն ու կառույցներն են առավել համապատասխան դեպքի շուրջ աշխատանքներում ներգրավվելու համար:
Տեղեկացված (իրազեկ) համաձայնություն ապահովելը Նախքան երեխայի մասին տեղեկատվության փոխանակումը կողմերը պետք է հասկանան, թե ինչու է անհրաժեշտ տեղեկությունը, և ինչ հետևանքներ կունենա դրա փոխանակումը երեխայի և նրա ընտանիքի համար: Որևէ գործողության մեջ ներգրավելուց առաջ երեխային և նրա ծնողին/խնամակալին անհրաժեշտ է տեղեկացնել ակնկալվող քայլերի մասին, որպեսզի ներգրավված կողմերը մասնակցեն գործընթացին՝ հասկանալով հնարավոր տարբերակների հետևանքներն ու ռիսկերը:	• Արդյո՞ք երեխային և նրա ծնողին/խնամակալին ներկայացվել են գործողությունների/միջամտությունների մանրամասները և այդ գործողությունների/միջամտությունների հետ կապված հնարավոր հետևանքներն ու ռիսկերը: • Ինչպե՞ս կարող եք ստանալ երեխայի և նրա ծնողի/խնամակալի համաձայնությունը՝ իրականացնելու անհրաժեշտ գործողությունները:
Երեխային լսելը և նրա մասնակցությունն ապահովելը Խրախուսել և հնարավորություն տալ երեխային հայտնել իր տեսակետը: Գործնականում մասնակցությունն այն է, որ մեծահասակները լսեն նրան: Երեխաներին լսելը և նրանց իրենց վերաբերող որոշումներ կայացնելու գործին ներգրավելը թույլ է տալիս նրանց յուրացնել շրջապատող աշխարհի վրա ազդելու կառուցողական ուղիներ ու հմտություններ:	• Ինչպե՞ս կարող եք ապահովել, որ երեխաները ստանան իրենց տարիքին և զարգացմանը համապատասխան տեղեկատվություն իրականացվող գործողությունների վերաբերյալ: • Ի՞նչ հնարավորություններ են ստեղծվել երեխայի կարծիքը լսելու, երեխային գործընթացին լիարժեր մասնակից դարձնելու համար:
Անվտանգություն և ապահովություն Սա վերաբերում է երեխայի համար ֆիզիկական և հոգեբանական անվտանգ միջավայրի ապահովմանը, այդ թվում՝ երեխայի հետ մասնագիտական աշխատանքի շրջանակում:	• Ի՞նչ կձեռնարկեք երեխային հետագա բռնությունից, անտեսումից, շահագործումից պաշտպանելու, ռիսկերի նվազեցման համար:

3. Անվտանգ և բռնությունից պաշտպանված միջավայրի ստեղծում

Երեխաների պաշտպանությունը բռնությունից, անտեսումից, շահագործումից և բռնության այլ ձևերից յուրաքանչյուրի պարտականությունն է: Բռնությունը կամ շահագործումը խաթարում է երեխայի բարեկեցության և զարգացման ցանկացած ոլորտ, ճիշտ այնպես, ինչպես ապահով միջավայրը երեխաներին հնարավորություն է տալիս լիարժեք զարգանալու:

Կարևոր է երեխայի շուրջը զարգացնել *պաշտպանիչ գործոններ*, և հասկանալով, թե որոնք են *ռիսկային գործոնները*, քայլեր ձեռնարկել նվազեցնելու և բացառելու դրանք:

Երեխային շրջապատող միջավայրը

Երեխային մեծացնելու գործընթացը ներառում է երեխային շրջապատող մարդկանց, կառույցների ու համակարգերի ներգրավվածությունը, մասնակցությունը և համագործակցությունը:

Որքան մոտ են դերակատարները երեխային, այնքան մեծ է նրանց ազդեցությունը երեխայի զարգացման և բարեկեցության վրա, և նույնչափ էլ մեծ՝ նրանց դերը երեխայի պաշտպանության գործում:



Ուսումնական հաստատություններում, ինչպես նաև դրանցից դուրս բոլոր երեխաների համար անվտանգ միջավայր ստեղծելը շարունակական գործունեության բաղադրիչ է, որը համալիր ջանքեր է պահանջում:

Բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձի պաշտպանության կազմակերպման գործընթացում պետք է ներգրավվեն լիազորված պետական մարմինները, ինչպես նաև ոչ պետական կառույցներ, ինչն ամրագրված է նաև ՀՀ օրենսդրությամբ[4]:

[4] ՀՀ կառավարության որոշում միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին. http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151124

Երեխաների պաշտպանությունը հնարավոր չէ իրականացնել մեկ կառույցի միջոցով: Այս գործընթացում համապատասխան կառույցների միջև համագործակցությունն անհրաժեշտություն է՝ ճիշտ գործողություններ իրականացնելու և երեխաներին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու համար: Արդյունավետ համագործակցություն ապահովելու համար կարևոր է հստակ պատկերացնել, թե որ կառույցներն են գործում նույն տարածքում և ինչ ծառայություններ են նրանք մատուցում: Նման քարտեզագրումը կօգնի նաև նպատակային ուղղորդումներ իրականացնել: Ծառայությունների քարտեզագրումը պետք է հանդիսանա ուսումնական հաստատության ԵՀԲ-յան արձագանքման կարգի մաս:

Ծառայության ոլորտ (առողջապահություն/ կրթություն/ նպաստներ/ երեխաների պաշտպանություն / վարչական ծառայություններ)	Ծառայության անուն	Վայր/ հասցե	Կոնտակտային անձի տվյալները	Ծառայության տեսակը (ցերեկային խնամք, մասնագիտական խորհրդատվություն, պետական/մասնավոր, վճարովի/ անվճար)	Ժամկետները /առկայությունը	Համագործակցության համաձայնագրի առկայություն (այո/ոչ, պայմաններ)
1.						
2.						
3.						

Ռիսկի և պաշտպանիչ գործոնները

Երեխաների զարգացման և պաշտպանության համար կարևոր է կենտրոնանալ երեխայի կյանքում պաշտպանիչ գործոնների ամրապնդման վրա: Մենք չենք շեշտադրում խնդիրները, «դեֆիցիտը» կամ ռիսկի գործոնները առանձնացնելով՝ փորձելով դրանք «շտկել», այլ հիմնվում ենք ուժեղ կողմերի, առկա ռեսուրսների և պաշտպանիչ գործոնների վրա: Պաշտպանիչ գործոններից յուրաքանչյուրը կարող է կարևոր դեր խաղալ երեխաների պաշտպանության և նրանց համար ապահով և հոգատար միջավայր ստեղծելու գործում:

<u>Ռիսկի և պաշտպանիչ գործոնների դասակարգում</u>

Գոյություն ունեն համընդհանուր ռիսկային և պաշտպանիչ գործոններ[5]:

Համընդհանուր պաշտպանիչ գործոնները ներառում են[6]՝

1. Վաղ մանկության ընթացքում հոգատարություն առնվազն մեկ հետևողական և արձագանքող խնամողի կողմից,

[5] identifying_risk_and_protective_factors_a_brief_guide_1.pdf (alliancecpha.org)

[6] Այս գործոնները փոխադարձաբար հիմնվում են միմյանց վրա: Առաջինը պայմաններ է ապահովում 2-րդի և 3-րդի համար, որոնք էլ ապահովում են 4-րդի նախադրյալները: Նմանապես, 5-րդը, 6-րդը և 7-րդը պայմաններ են ստեղծում 8-րդի համար: «Կարողություններ զարգացնելու հնարավորություններ» արտահայտության օգտագործումը «հմտություններ»-ի փոխարեն միտումնավոր է և օգտագործվում է ցույց տալու ոչ թե անհատին բնորոշ հատկանիշներ, այլ երեխային շրջապատող միջավայրի հատկանիշներ ու գործոններ:

2. Առնվազն 1 անձի հետ բովանդակալից կապերի ձևավորում և պահպանում կյանքի ընթացքում,
3. Հույզերը և զգացմունքները կառավարելու կարողություն,
4. Խնդիրներ լուծելու, սովորելու և հարմարվելու կարողությունները զարգացնելու հնարավորություններ,
5. Հաջորդաբար աճող հնարավորություններ ձեռք բերելու հմտություններ և գիտելիքներ մշակույթի պահանջներին համապատասխան,
6. Արդյունավետ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության հասանելիություն,
7. Տարիքին համապատասխան հնարավորություններ ընտանիքի և համայնքի բարեկեցությանը նպաստելու հարցում,
8. Համարժեք ինքնագնահատական և արդյունավետ ինքնահիրացման զգացում,
9. Կյանքը իմաստավորելու/կյանքի իմաստը գտնելու ունակություն,
10. Տվյալ մշակութային համատեքստում աճող կարողությունները կիրառելու, գործելու և դատողություններ անելու հնարավորություն,
11. Մասնակցություն մշակութային ծեսերին, որը հանգեցնում է պատկանելության զգացողության,
12. Հույս, հավատ և լավատեսություն:

Համընդհանուր ռիսկային գործոնները ներառում են՝

1. Վաղաժամ ծնունդ, ծննդյան անոմալիաներ, ցածր քաշ կամ շրջակա միջավայրի տոքսինների ազդեցությունը նախածննդյան կամ հետծննդյան շրջանում:
2. Խնամքի բացակայություն վաղ մանկության շրջանում հետևողական և արձագանքող խնամակալների կողմից:
3. Խնդիրների լուծման, սովորելու և հարմարվելու կարողությունները զարգացնելու հնարավորությունների կորուստ կամ բացակայություն:
4. Տվյալ մշակույթի պահանջներին համապատասխան գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու և խորացնելու հնարավորությունների կորուստ կամ բացակայություն:
5. Չբավարարված հիմնական պահանջմունքներ (օրինակ՝ բավարար սննդի, կացարանի, խմելու ջրի, կլիմայական պայմաններին համապատասխան հագուստի և բժշկական օգնության սահմանափակ հասանելիություն):
6. Ընտանիքի բաժանում՝ ժամանակավոր կամ մշտական, մահվան, մեկ կամ մի քանի ծնողների կամ հիմնական խնամակալների կողմից խնամքը շարունակելու անկարողության պատճառով (օրինակ՝ բռնի հեռացման, բանտարկության, արտաքսման, զինված ընդհարման, ծայրահեղ զրկանքների կամ հալածանքի, վնասվածքի, ֆիզիկական կամ հոգեկան հիվանդության պատճառով):
7. Կառուցվածքային, սոցիալական կամ միջանձնային բռնություն (ռասիզմը, էթնիկական խտրականությունը և մարգինալացումը, գենդերային խտրականությունը, պետության կողմից հովանավորվող բռնությունը, համայնքային բռնությունը, ընտանեկան կամ կողակցի կողմից բռնությունը, ֆիզիկական, սեռական բռնությունը, հոգեբանական չարաշահումը):
8. Արդյունավետ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության անհասանելիություն կամ կորուստ:

9. Համայնքային կապերի կորուստ/խզում:
10. Վնասակար սոցիալական կամ գենդերային նորմեր:
11. Երեխաներին չարաշահումից, անտեսումից, շահագործումից և բռնությունից պաշտպանող օրենսդրական նորմերի կամ դրանց կիրառման բացակայություն:
12. Հարկադրված միգրացիայի կամ տան կորստի հետևանքով տեղաշարժեր:



Կարևոր է հասկանալ առկա պաշտպանիչ և ռիսկային գործոնները երեխային շրջապատող միջավայրի յուրաքանչյուր մակարդակում՝ պաշտպանիչ գործոնների վրա հիմնվելով ռիսկերը նվազեցնելու համար:

Գործնական աշխատանք. Օգտագործեք Օրինակ 1-ում նշված պայմանական դեպքը և ուղղորդող հարցերը՝ գնահատելու, թե պաշտպանիչ և ռիսկային ինչ գործոններ կան երեխային շրջապատող միջավայրի յուրաքանչյուր մակարդակում:

Օրինակ 1.

Մի պահ պատկերացրեք այն երեխային, որը բախվում է ***հոգեբանական բռնության մեծահասակների կողմից (հոգեբանական վատ վերաբերմունք, ծաղր կամ անտեսում)***:

- Ի՞նչ գործոններ կամ իրադարձություններ կարող էին հանգեցնել նրան, որ երեխան այսպիսի իրավիճակի զոհ է դարձել: Ի՞նչն է երեխաներին խոցելի դարձնում նման խնդրի նկատմամբ:
- Արդյո՞ք կան գործոններ՝
  - **անհատի մակարդակում** (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, հույզերը և զգացմունքները կառավարելու դժվարություններ և այլն),
  - **ընտանիքի մակարդակում կամ** որևէ խնդիր ծնողների հետ (ամուսնալուծություն, միայնակ մոր երեխա, ալկոհոլի/թմրանյութերի չարաշահում տան մեծահասակի կողմից, գործազրկություն և այլն),
  - **համայնքի մակարդակում** (զինված ջոկատների մոտ տեղակայված լինելը, համայնքում կրթական հաստատությունների բացակայություն և այլն),
  - **գործոններ/խնդիրներ հասարակության մակարդակում** (որոշակի մշակութային նորմեր/համոզմունքներ, ավանդույթներ, որոնք ռիսկային գործոն են հանդիսանում երեխաների համար և այլն):
- Ո՞ր երեխաներն են առավել խոցելի այս խնդրի նկատմամբ (օրինակ՝ ավելի շատ տղանե՞րը, թե՞ աղջիկները, ո՞ր տարիքային խումբը և այլն):
- Ինչի՞ շնորհիվ է, որ կան երեխաներ, որոնք չեն դառնում նման խնդրի զոհ, չեն առնչվում նման խնդրի: Ի՞նչն է նրանց պաշտպանում: Որո՞նք են պաշտպանիչ գործոնները:

Կարևո՛ր է.

Երեխայի միջավայրի յուրաքանչյուր մակարդակում պետք է իմանալ պաշտպանիչ ու ռիսկային գործոնները և միևնույն ժամանակ ստեղծել, ուժեղացնել պաշտպանիչ միջավայրը՝ երեխայի բարեկեցիկ կյանքը ապահովելու համար:

Դպրոցում առկա են և՛ պաշտպանիչ, և՛ ռիսկային գործոններ: Պետք է հասկանալ այդ գործոնները՝ երեխաներին ներգրավելով քննարկումների մեջ, և համապատասխան գործողություններ իրականացնել ռիսկերը նվազեցնելու և պաշտպանիչ գործոններն ուժեղացնելու նպատակով:

4. Նպաստում ենք երեխայի զարգացմանն ու աճին՝ բացահայտելով ներքին ու արտաքին զարգացնող նախադրյալները

Երեխաների զարգացմանը և բարեկեցությանը նպաստելու համար ավելի արդյունավետ է հիմնվել ուժեղ կողմերի վրա և ուժեղացնել զարգացնող նախադրյալները, քան կենտրոնանալ թույլ կողմերի և խնդիրների վրա:

<u>Զարգացնող նախադրյալները</u>
ներքին անհատական կարողությունների, վերաբերմունքի, արժեքների, ինչպես նաև **արտաքին** փորձառությունների, հարաբերությունների համակցություն են, որոնք աջակցում և դաստիարակում են երեխաներին: Ներքին և արտաքին նախադրյալների համակցությունը օգնում է երեխաներին հաջողությամբ զարգանալ և վարել արդյունավետ կյանք:

Search Institute-ի[7] կողմից մշակվել է 40 զարգացնող նախադրյալների վերաբերյալ տեսությունը, որտեղ ներկայացվում է, թե ինչ է պետք, որ երեխաները և երիտասարդները հաջողակ լինեն կյանքում: Այդ տեսության հիմքում դրական մոտեցումն է երեխաների և դեռահասների զարգացման գործընթացին՝ գնահատելով նրանց՝ դրական փոփոխություններ իրականացնելու հնարավորություններն ու ներուժը: Այն կենտրոնանում է երեխաների և դեռահասների ուժեղ կողմերի և հմտությունների ձևավորման վրա: Երբ երեխաները հնարավորություն ունեն զարգացնելու իրենց կարողությունները՝ զարգացնող նախադրյալները, դա օգնում է նվազեցնել ռիսկային վարքագիծը և նպատաստում նրան, որ երեխաները և դեռահասները ավելի շատ ներդրում ու ակտիվ մասնակցություն ունենան իրենց ընտանիքի, դպրոցի և համայնքի կյանքում: Զարգացնելով դրական զարգացման գաղափարը՝ Search Institute-ը մշակել է ներքին և արտաքին գարգացնող նախադրյալների 8 ոլորտ, որոնք օգնում են երեխաներին և դեռահասներին կառուցել կարևոր հարաբերություններ և ձևավորել անհրաժեշտ որակներ:

Զարգացման նախադրյալները խելամիտ առաջնահերթություններ են՝ օգնելու երեխաներին մեծանալ առողջ և հաջողակ: Արտաքին զարգացման նախադրյալների չորս ոլորտները կենտրոնանում են արտաքին կառույցների, հարաբերությունների և գործունեության վրա, որոնք դրական միջավայր են ստեղծում երեխաների համար: Ներքին զարգացման նախադրյալների չորս ոլորտներն արտացոլում են ինտելեկտուալ արժեքները, հմտությունները և համոզմունքները, որոնք երեխաները նույնպես պետք է զարգացնեն՝ իրենց շրջապատող աշխարհում լիարժեք ներգրավվելու և գործելու համար:

[7] http://www.search-institute.org/

Ներքին զարգացման նախադրյալներ	Արտաքին զարգացման նախադրյալներ
Ուսմանը նվիրված լինելը	Աջակցություն
Դրական արժեքներ	Հզորացում
Սոցիալական հմտություններ	Սահմաններ և ակնկալիքներ
Դրական անհատականություն	Ժամանակի նպատակային օգտագործում

<u>Հավելված 1-ում</u> ներկայացված են «Զարգացնող նախադրյալներ՝ ներքին և արտաքին»՝ ըստ տարիքային խմբերի:

Երբ երեխաներն ունեն զարգացման շատ նախադրյալներ, ավելի հավանական է, որ նրանք հետագայում կդրսևորեն դրական վարքագիծ: Զարգացման նախադրյալների առկայությունը երաշխավորում է, որ երեխաներն ավելի քիչ խնդիրներ ունեն ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործման, բռնության և վաղ սեռական հարաբերությունների մեջ ներգրավվելու ռիսկերի առնչությամբ: Նախադրյալների ավելացումը հանգեցում է նաև երեխաների կյանքում ճգնաժամային իրավիճակների նվազեցման: Այսպիսով, նախադրյալների ավելացումը խթանելով՝ մենք ավելի քիչ ժամանակ ենք ծախսում երեխաների հետ կապված խնդիրները լուծելու համար և ավելի շատ ժամանակ ենք ունենում բացահայտելու երեխաների ուժեղ կողմերն ու առանձնահատկությունները:

Կարևո՛ր է.
Դպրոցը պետք է դառնա երեխաների ներքին և արտաքին նախադրյալները զարգացնելու միտված և բոլոր երեխաներին զարգանալու հնարավորություններ ապահով միջավայր: Նախադրյալները զարգացնելու համար հարկավոր է մտածելակերպի և երեխաների հետ շփման մոտեցումների փոփոխություն:

Զերծ մնալ	Կիրառել
Խնդիրների մասին խոսելուց	Խոսել դրական կողմերի և հնարավորությունների մասին
Խանգարող և «պրոբլեմատիկ» երեխաների վրա կենտրոնանալուց	Կենտրոնանալ բոլոր երեխաների և դեռահասների վրա
Տարիքային տարանջատում դնելուց	Նպաստել տարբեր տարիքային խմբերի շփմանը և միջսերնդային համայնքի ձևավորմանը
Երեխաներին որպես խնդիր դիտարկելուց	Երեխաներին դիտարկել որպես ռեսուրս

Խնդիրներին արձագանքելուց	Նախաձեռնող և պրոակտիվ լինել՝ հիմնվելով ուժեղ կողմերի վրա
Ուրիշներին մեղադրելուց	Պահանջել անձնական պատասխանատվություն
Երեխաներին որպես ծրագրեր իրականացնելու օբյեկտ վերաբերվելուց	Հարգել և ընդունել երեխաներին՝ որպես դերակատարների սեփական զարգացման գործընթացում
Միայն նեղ մասնագետներին ներգրավելուց	Բոլորին ներգրավել երեխաների կյանքում
Մրցակցային առաջնահերթություններ սահմանելուց	Համագործակցել
Արժեքների և առաջնահերթությունների վերաբերյալ հակասական ուղերձներ հաղորդելուց	Հետևողականություն կարևոր հարցերի շուրջ ուղերձներ հաղորդելու առումով
Ճգնաժամային իրավիճակների կառավարումից	Տեսլականի համատեղ ձևավորում
Հուսահատությունից	Հույսի և լավատեսության ձևավորում

Վերը նշված նախադրյալներն ամրապնդելիս պետք է հաշվի առնել միջամտությունների հնարավորությունները երեխային շրջապատող միջավայրի յուրաքանչյուր մակարդակում: Բերված հարցադրումների օրինակները կարող են օգնել պատկերացնելու հնարավոր գործողությունների ուղղվածությունը տարբեր մակարդակներում:



«Երեխա» մակարդակ

- Ի՞նչ հնարավորություններ կարող են տրամադրվել երեխաներին մեր դպրոցում՝ օգնելու ամրապնդել նրանց ներքին զարգացման գործոնները:

«Ընտանիք» մակարդակ

- Ինչպե՞ս կարող է մեր դպրոցն աջակցել ընտանիքներին/ծնողներին՝ բարելավելու իրենց գիտելիքներն ու հմտությունները, ուժեղացնել ընտանիքների աջակցությունն իրենց երեխաներին:

«Համայնք/հասարակություն» մակարդակ

- Ինչպե՞ս կարող է մեր դպրոցը, համագործակցելով այլ կառույցների և համայնքի այլ դերակատարների հետ (օրինակ՝ համայնքապետարան, եկեղեցի, սոցիալական աշխատողներ, ոստիկանություն, հասարակական կազմակերպություններ և այլն), աջակցել երեխաներին ուժեղացնելու իրենց արտաքին զարգացման գործոնները:

Կարևո՛ր է.

- ✓ Անհրաժեշտ է ապահովել ներքին զարգացման նախադրյալների առկայությունը երեխայի կյանքում և կեցությունը միջավայրում, որտեղ զարգացած են արտաքին նախադրյալները:
- ✓ Դպրոցի աշխատակիցները պետք է օգնեն երեխաներին և իրենց ընտանիքներին՝ ձեռք բերելու ներքին և արտաքին նախադրյալները երեխայի բարեկեցության ապահովման համար:
- ✓ Յուրաքանչյուրը կարող է զարգացնել նախադրյալները:
- ✓ Բոլոր երեխաները/երիտասարդները նախադրյալների կարիք ունեն:
- ✓ Հարաբերությունները շատ կարևոր դեր ունեն յուրաքանչյուր երեխայի կյանքում:
- ✓ Նախադրյալներ զարգացնելը շարունակական գործընթաց է:
- ✓ **Կենտրոնանալով ներքին և արտաքին նախադրյալների զարգացման վրա՝ նպաստում եք երեխաների հանդեպ բռնության կանխարգելմանը:**

Գործնական օրինակներ՝

- *Իրականացնել ծրագրեր, որոնք զարգացնում են սովորողների հոգատարությունը մեկը մյուսի, իրենց դպրոցի և համայնքի նկատմամբ (բարձր դասարաններում սովորողներն օգնում են փարիքով ավելի փոքր երեխաներին, կամ դասարանի լավ սովորողներն օգնում են ավելի վատ սովորողներին), դպրոցի գրադարանի բարելավում, նոր գրքերով համալրում, հերթապահությունների կազմակերպում, համայնքի տեսարժան վայրերի մաքրում և այլն:*
- *Դպրոցի և դասարանի կանոնների և կանոնները խախտելու դեպքում համապատասխան հետևանքների սահմանում երեխաների հետ :*
- *Սովորողները արտադասարանական ծրագրեր են իրականացնում. պաստառների պատրաստում դպրոցի համար, միջոցառումների կազմակերպում և այլն:*
- *Ուսուցիչը առաջարկում է յուրաքանչյուր երեխայի մեկ գիրք ծրագրից դուրս, որպեսզի երեխաները կարդան հաճույքի համար: Կարդալուց հետո երեխաները կարող են փոխանակել գրքերը: Որևէ գրքի շուրջ քննարկումների կազմակերպում: Գրքի շնորհանդեսի կազմակերպում՝ հրավիրելով հեղինակին:*
- *Ուսուցիչը տարբեր եղանակներ է ընտրում՝ խրախուսելու աշակերտներին ավելի լավ սովորել և ձգտել ավելի լավ արդյունքների:*
- *Ուսուցիչը հաճախ խոսում է ալկոհոլի և թմրանյութերի բացասական ազդեցության մասին, ներկայացնում առողջ ապրելակերպի կարևորությունը, ոստիկանության անչափահասների տեսուչի հետ համատեղ կազմակերպում քննարկումներ երեխաների մասնակցությամբ:*
- *Ուսուցիչը ուսումնական գործընթացի ժամանակ պարբերաբար սովորողին տալիս է ընտրության հնարավորություն:*
- *Ուսուցիչը կազմակերպում է քննարկումներ սովորողների հետ իրենց ապագա պլանների և նպատակների վերաբերյալ, փորձում է օգնել սովորողներին պլանավորելու իրենց նպատակին հասնելու ճանապարհը:*

5. Արձագանքում ենք բռնության դեպքերին

Բռնության դեպքի առկայության պարագայում առաջնային է, որ բռնության զոհ դարձած երեխան ստանա համապատասխան օգնություն: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ իմանա, թե ինչպես ճանաչել բռնության առկայությունը, ինչպես հայտնել/տեղեկացնել բռնության դեպքի մասին, և որն է իր դերը դեպքի արձագանքման գործընթացում:

Երեխաների հանդեպ բռնության նկատմամբ անտարբեր չմնալը և անմիջապես արձագանքելը յուրաքանչյուրիս պարտականությունն է:

Երեխաների հանդեպ բռնությանն անմիջապես արձագանքելը ուսումնական հաստատության աշխատակիցների կողմից երեխային աջակցելու կարևոր և առաջնային քայլն է, ինչը ամրագրված է նաև Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգով[8]:

Կարևոր է հիշել, որ ցանկացած երեխա կարող է բռնության զոհ դառնալ: Ուսումնական հաստատության աշխատակիցները պետք է ուշադիր լինեն, նկատեն և ճանաչեն բռնության նշանները երեխաների և ընտանիքների հետ աշխատանքի ողջ ընթացքում: Հարկավոր է ուշադիր լինել բոլոր երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցողների նկատմամբ, ովքեր բռնության ենթարկվելու ավելի մեծ վտանգի տակ են, ինչպես նաև տղաների, ովքեր քիչ հավանական է, որ հայտնեն կամ ընդունեն սեռական կամ բռնության որևէ այլ տեսակի կիրառումն իրենց նկատմամբ: Նկատելով կամ անգամ կասկածելով բռնության որևէ դրսևորում՝ ուսուցիչը պետք է լրջորեն վերաբերվի այդ հանգամանքին և անհապաղ քայլեր ձեռնարկի՝ արձագանքելով ստեղծված իրավիճակին:

Բռնության ենթարկվելիս երեխաները հաճախ փորձում են կիսվել իրենց համար վստահելի մեծահասակների հետ, սակայն հաճախ մեծահասակները նրանց չեն լսում, չեն հավատում և չեն հասկանում: Երեխաները փորձում են նաև անուղղակիորեն հայտնել այն իրավիճակի մասին, որի մեջ հայտնվել են, իրենց պահվածքի և վերաբերմունքի միջոցով: Երբեմն այդ պահվածքն ու վերաբերմունքը կարող են արտահայտվել «վատ վարքի» տեսքով: Նման դեպքերում հաճախ երեխաները որակվում են որպես «դժվար» և «վատ վարք ունեցող»:

«Բռնության նշանները» բաժնում արդեն քննարկվել են վարքագծի որոշ ձևեր ու դրսևորումներ, որոնք կարող են հուշել, որ երեխան բռնության զոհ է դարձել, չնայած հաստատ ոչինչ ասել հնարավոր չէ, մինչև յուրաքանչյուր դեպքը չուսումնասիրվի համապատասխան մասնագետների կողմից:

Դպրոցի շրջանակներում հոգեբանամանկավարժական արդյունավետ աջակցության տրամադրման դեպքում բռնության ենթարկված երեխաներից շատերը կարող են լրացուցիչ մասնագիտացված ծառայությունների ուղղորդման կարիք չունենալ: Այնուամենայնիվ, եթե որևէ խնդիր շարունակում է երեխային լուրջ անհանգստություն պատճառել, ապա ուղղորդումն անհրաժեշտ է:

[8] 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1044-Ն ՀՀ Կառավարության որոշում Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին, Arlis

5.1 Արձագանքման քայլերը

Կարևոր է, որ ուսուցիչները հստակ պատկերացնեն, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի պատրաստ լինեն արձագանքել բռնության դեպքերին:

Քայլեր, որոնք պետք է ձեռնարկել, եթե կասկածում եք, որ երեխան ենթարկվել է բռնության.

- Հանգիստ արձագանքե՛ք, պահպանեք հանգստություն ցանկացած իրավիճակում:
- Հավաստիացրե՛ք երեխային, որ նա ճիշտ է վարվել ձեզ դիմելով, բայց մի խոստացեք գաղտնիություն պահպանել, քանի որ դուք պետք է համապատասխան մասնագետներին հայտնեք տեղի ունեցածի մասին, որպեսզի հնարավոր լինի ապահովել անհրաժեշտ օգնությունը երեխային:
- Լրջորե՛ն վերաբերվեք երեխայի ասածներին, նույնիսկ եթե դա վերաբերում է մեկին, ով, ձեր համոզմամբ, չի կարող վնասել երեխային:
- Խուսափե՛ք ուղիղ հարցեր տալուց *(տես ճիշտ հարցադրումների մասին համապատասխան հատվածը ներքևում):*
- Հարցրե՛ք երեխային, թե որ ծնողի/ խնամակալի ներկայությունը և /կամ ուղեկցությունն է իր համար ցանկալի: Ամեն դեպք յուրահատուկ է, և կարևոր է այն դիտարկել անհատական համատեքստում:
- **Դեպքի մասին հայտնե՛ք ձեր ուսումնական հաստատության երեխաների պաշտպանության պատասխանատուին և քայլեր ձեռնարկե՛ք ձեր ուսումնական հաստատության երեխաների հանդեպ բռնության արձագանքման պլանի համաձայն**:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն պետք է ունենա երեխաների հանդեպ բռնության դեպքերի արձագանքման մշակված և համաձայնեցված երեխայակենտրոն մեխանիզմ: Այն կարող է գծապատկերի ձևով մշակվել և ընդունվել հաստատության կողմից, որպեսզի ավելի պատկերավոր և պարզ լինի, թե ինչ է հարկավոր անել, երբ տեղեկանում ես ԵՀԲ դեպքի մասին *(տե՛ս Հավելված 3-ում բերված օրինակը, որը կարելի է հարմարեցնել տվյալ ուսումնական հաստատության համար)*:
Միևնույն ժամանակ յուրաքանչյուր ուսումնական հաստատություն պետք է ունենա երեխաների հանդեպ բռնության դեպքերի արձագանքման պատրաստվածության պլան՝ ներառելով այն որպես ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մաս: Պլանի մշակման համար կարող են կիրառվել ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը (*տես Հրաման No 16-Ն, 15 հունվարի 2021 թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին»*):
Արձագանքման պատրաստվածության պլանը պետք է ներառի նաև տարածքում առկա ծառայությունների քարտեզագրումը՝ համապատասխան ուղղորդումների և դեպքի շուրջ համագործակցության համար:
Եթե ձեր հաստատությունը դեռ չի ավարտել նման պլանի մշակումն ու հաստատումը, խնդիրը բարձրաձայնեք տնօրինության մոտ, որպեսզի հնարավորինս արագ իրականացվեն համապատասխան աշխատանքները *(տես մշակված պլանի օրինակ Հավելված 4-ում, որը կարելի է հարմարեցնել տվյալ ուսումնական հաստատության համար):*
Հարկ եղած դեպքերում կրթական հաստատությունները կարող են դիմել մասնագիտացված ծառայություններին (ինչպիսիք են, օրինակ՝ համայնքային սոցիալական ծառայությունները, ոչ պետական կազմակերպությունները, որոնք զբաղվում են երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով և այլն)՝ աջակցություն ստանալու երեխաների հանդեպ բռնության դեպքերի արձագանքման պլանի մշակման գործընթացում:

Բոլոր դեպքերում, եթե կասկած ունեք, որ երեխայի հանդեպ բռնություն է տեղի ունեցել, հանգստացրե՛ք երեխային՝ ասելով, որ կան աջակցող մեծահասակներ, որոնք անհրաժեշտ քայլեր կձեռնարկեն երեխայի անվտանգությունը և համապատասխան օգնությունն ապահովելու համար: Եթե կասկածներ կան, որ երեխայի նկատմամբ բռնություն է կիրառվել, պետք է առաջնահերթություն տրվի երեխայի անվտանգութանն ու լավագույն շահին, և դեպքի շուրջ աշխատող թիմը պետք է զգոն լինի, որպեսզի բացառի երեխայի նկատմամբ ցանկացած վտանգ *(տե՛ս «Երեխային բռնությունից պաշտպանելու հիմնական սկզբունքները» նյութը)*:

Կարևո՛ր է.

- ✓ Յուրաքանչյուր աշխատող պարտավոր է իմանալ, թե ով է իր ուսումնական հաստատության երեխաների պաշտպանության պատասխանատուն: Նախապես տեղեկացեք այդ մասին և ունեցեք այդ անձի հետ կապվելու հասանելի միջոցներ:
- ✓ Նախապես տեղեկացեք ձեր ուսումնական հաստատության բռնության դեպքերի արձագանքման պլանի մասին, ծանոթացեք բովանդակությանը, որպեսզի պատրաստված լինեք արձագանքելու բռնության դեպքերին այդ պլանին համապատասխան:

5.2 Տարիքային առանձնահատկությունները, բռնության հետևանքները և արձագանքման առանձնահատկությունները

հ/հ	Տարիք	Հոգեբանական առանձնահատկություններ	Արձագանքը բռնության փաստին	Արձագանքման առանձնահատկություններ
1	6-11 տարեկան	✓ Ակտիվորեն զարգանում են իմացական գործընթացները: ✓ Մտածողությունը ճկուն է, եսակենտրոնությունը նվազում է: ✓ Առկա են բարոյական պատկերացումներ, որոնք դեռ հիմնվում են արտաքին պատժի կամ խրախուսանքի վրա: ✓ Այս կամ այն քայլի բարոյականության մասին դատողությունները հիմնվում են դրանց հետևանքների, այլ ոչ թե դրդապատճառների վրա: ✓ Առաջին պլան է գալիս սեփական անձի և նրա պատասխանատվության	✓ Երկարժեք զգացմունքներ մեծահասակների նկատմամբ: ✓ Դժվարություններ ընտանեկան դերերում կողմնորոշվելու հարցում, վախ, ամոթի զգացում, աշխարհի նկատմամբ անվստահություն: ✓ Վնասվածքները, բռնության արտաքին հետևանքները և պատճառները թաքցնելու ձգտում: ✓ Միայնակության զգացում, ընկերների բացակայություն: ✓ Դասերից հետո տուն գնալու վախ (կամ	✓ Տալ բաց, ընդհանուր հարցեր, որոնք թույլ կտան ազատ շարադրել իրողությունը: ✓ Խուսափել եզրույթներից, որոնք կարող են վախեցնել երեխային: ✓ Մոտիվացնել երեխային՝ զրույցի ընթացքում ընդգծելով նրա դրական դերն ու նշանակալիությունը: ✓ Ձերծ մնալ երեխային ուղղակի կամ անուղղակի սպառնալուց, վախեր ներշնչելուց: ✓ Հաշվի առնել այն հանգամանքը, որ այս տարիքային խմբի երեխաները կենտրոնացած են պատժից խուսափելու

		ընկալման կարևորությունը:	դպրոց գալու վախ, եթե բռնություն իրականացնող անձը դպրոցում է), սննդային տարօրինակ նախընտրություններ: ✓ Քնի և ախորժակի խանգարումներ, մարդկանցից մեկուսանալու ձգտում, ագրեսիվ վարքագիծ:	կամ պարգևատրվելու վրա, ինչը կարող է ազդել պատասխանների ճշմարտացիության վրա, հատուկ ուշադրություն դարձնել ոչ խոսքային ազդակներին:
2	12-14 տարեկան	✓ Մեծանում է սեփական անձի և նրա պատասխանատվության ընկալման կարևորությունը, ինչի արդյունքում փոխվում է դեռահասի կողմից սեփական դերի ընկալումն իր հետ տեղի ունեցած իրադարձություններում: ✓ Կարևորում է լավ հարաբերությունների պահպանումը և խրախուսանքը այլ մարդկանց, հատկապես հասակակիցների և նշանակալի մեծահասակների կողմից: ✓ Հուզական անհավասարակշռություն: ✓ «Մեծահասակ» լինելու զգացողության զարգացում: ✓ Ինքնագիտակցության զարգացում: ✓ Ապահովության փնտրտուք հասակակիցների շրջանում: ✓ Հասունության և անկախության ձգտում: ✓ Առանձնանալու ձգտում, ինքնամփոփություն:	✓ Անվստահություն, մեծահասակների նկատմամբ երկարժեք զգացմունքներ, սոցիալական դերերի ձևավորման դժվարություններ, սեփական անպիտանության զգացում: ✓ Հակասական վարքագիծ, ինքնասպանության փորձեր, փախուստներ տնից, ագրեսիայի դրսևորումներ, դեպրեսիվ վիճակներ, թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման փորձեր:	✓ Օգտագործել հասկանալի, պարզ, բայց ոչ ժարգոնային խոսք: ✓ Հաշվի առնել այն հանգամանքը, որ դեռահասը այս առումով դեռևս լիարժեքորեն հասունացած չէ և կարող է ունենալ իր կարծիքով մանկական հետաքրքրություններ, որոնք ամեն կերպ ջանում է թաքցնել: ✓ Բացահայտել և հաշվի առնել դեռահասի հետաքրքրությունները:

		✓ Կաշկանդվածություն, ամոթխածություն: ✓ Խոցելի ինքնասիրություն: ✓ Չափազանցված և մաքսիմալիստական մտածողություն: ✓ Կոնֆլիկտայնություն, հակվածություն ներքին կոնֆլիկտների: ✓ Ըմբոստություն ծնողական/ հասարակական/ համակարգային նորմերի դեմ:		
3	15-18 տարեկան	✓ Ընտանիքից անկախ լինելու պահանջմունքը ակտիվ է (ինքնահաստատում, ինքնուրույնություն): ✓ Ձգտում է հաջողության հասնել՝ փորձելով սեփական ուժերը: ✓ Ձգտում է ինքնահիրացվել, տարբեր իրավիճակներում դրսևորել սեփական «Ես»-ը:	✓ Մեկուսացում, անվստահություն շրջապատող աշխարհի նկատմամբ: ✓ Ապակողմնորոշվածություն սոցիալական դերերում, երկարժեք զգացմունքներ: ✓ Հակասական վարքագիծ, ինքնասպանության փորձեր, փախուստներ տնից, ագրեսիայի դրսևորումներ, դեպրեսիվ վիճակներ, թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման փորձեր:	✓ Հաշվի առնելով տարիքային այս խմբի առանձնահատկություն-ները՝ խուսափել այնպիսի խոսքային և ոչ խոսքային միջոցների կիրառումից, որոնց արդյունքում դուք կարող եք ընկալվել գերակայող դիրքում՝ հնարավոր ընդդիմացող արձագանքներից զերծ մնալու նպատակով: Զրույցի վարման տեմպի ընտրությունը թողնել դեռահասին՝ հոգեբանական ապահովության և հարմարավետության զգացում ձևավորելու և ճնշման կամ պարտադրանքի ցանկացած դրսևորումից խուսափելու նպատակով:

5.3 Բռնության փաստի մերժման հիմնական պատճառները

Երեխային տրամադրվող աջակցությունն սկսելուց առաջ կարևոր է հաշվի առնել երեխայի, դեռահասի պատրաստակամությունը՝ ընդունելու բռնության փաստը և խոսելու այդ մասին:

Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել երեխաների և դեռահասների 4 խումբ.

1) երեխաներ և դեռահասներ, ովքեր պատրաստ են մանրամասնորեն պատմել տեղի ունեցածի մասին մեկ կամ մի քանի մարդու,
2) երեխաներ և դեռահասներ, ովքեր կարող են միայն մասամբ խոստովանել ու պատմել տեղի ունեցածի մասին (նրանք սովորաբար կամ մեղմում, կամ թաքցնում են բռնության մասին տեղեկությունները),
3) երեխաներ և դեռահասներ, ովքեր հոգեբանորեն պատրաստ չեն խոսել տեղի ունեցածի մասին, որովհետև բռնության փաստը բացահայտվել է անկախ իրենց կամքից, ոչ իրենց նախաձեռնությամբ,
4) երեխաներ և դեռահասներ, ում նկատմամբ բռնության մասին ենթադրվում է, մինչդեռ անձամբ իրենք տարբեր պատճառներով չեն ուզում պատմել տեղի ունեցածի մասին:

Բռնության փաստի մերժման հիմնական պատճառները

Երեխայի կողմից բռնության փաստի մերժումը կարող է պայմանավորված լինել հետևյալ գործոններով.

- անվստահություն մեծահասակների նկատմամբ, հնարավոր նոր անցանկալի իրադարձությունների կանխատեսում և վախ,
- ամոթի զգացում, մտավախություն, որ շրջապատողները կփոխեն իր նկատմամբ վերաբերմունքը, կսկսեն վատ կամ ավելի վատ վերաբերվել նայլն,
- վախ և կախվածություն բռնություն գործադրող անձից,
- մտավախություն՝ վշտացնելու բռնություն չգործադրած ծնողին, վախ ընտանեկան հնարավոր կոնֆլիկտներից, ամուսնալուծությունից և այլն:

5.4 Բռնության ենթարկված երեխաներին տրամադրվող աջակցության հոգեբանական առանձնահատկությունները

Գործնական աշխատանք.

Անհրաժեշտ նյութեր՝ հոգեբանական աշխատանքի տարբեր քայլերի գրառմամբ թղթեր

Ընթացք՝

Մասնակիցները բաժանվում են 8 խմբի, որոնցից յուրաքանչյուրն ստանում է որևէ քայլի նկարագրությամբ թուղթ: Խմբերից յուրաքանչյուրը քննարկում և ներկայացնում է, թե իրեն բաժին ընկած քայլն ինչ աշխատանքներ է ենթադրում: Այնուհետև միմյանց լսելուց հետո խմբերը փորձում են դասավորել քայլերը տրամաբանական հաջորդականությամբ: Մասնակիցների աշխատանքն ամփոփվում է դասընթացավարի կողմից քայլերի հաջորդականության և բովանդակության ներկայացմամբ:

Հոգեբանական աշխատանքի հիմնական քայլերն են[9].

Քայլ 1. *Երեխայի հետ նախնական կապի հաստատում*

Քայլ 2. *Շրջապատող աշխարհի նկատմամբ երեխայի վստահության վերականգնում*

Քայլ 3. *Կուտակված հույզերը խոսքային և ոչ խոսքային միջոցներով արտահայտելու հնարավորության ընձեռում*

Քայլ 4. *Աջակցություն վախերի հաղթահարման ուղղությամբ*

Քայլ 5. *Աջակցություն մեղքի զգացման հաղթահարման ուղղությամբ*

Քայլ 6. *Աջակցություն ագրեսիան արտահայտելու և վերահսկելու ուղղությամբ*

Քայլ 7. *Ճանաչողական աղավաղումների շտկում*

Քայլ 8. *Աջակցություն ինքնավստահության և ինքնագնահատականի կարգավորման ուղղությամբ:*

Քայլ 1. Երեխայի հետ նախնական կապի հաստատում

Երեխայի հետ նախնական կապի հաստատման առաջնային նպատակը *հոգեբանական անվտանգության ապահովումն է*: Աշխատանքի այս փուլը նպատակ ունի.

- Պարզել երեխայի վարքին բնորոշ հոգեբանական բացասական ախտանիշները և ապագայում դրանց վտանգավորության աստիճանը:
- Պարզել երեխայի ստացած հոգեբանական տրավմաները:
- Բացահայտել երեխայի հոգեբանական ռեսուրսները:

Այս փուլում աշխատանքներն իրականացվում են հիմնականում դիտարկման և զրույցի միջոցով, որոնց առանձնահատկություններն առավել մանրամասն ներկայացված են «**Բռնության ենթարկված երեխաների հետ անցկացվող զրույցի առանձնահատկությունները»** ենթավերնագրի ներքո:

Քայլ 2. Շրջապատող աշխարհի նկատմամբ երեխայի վստահության վերականգնում

Բռնության ենթարկված երեխաները, որպես կանոն, կորցնում են վստահությունը շրջապատող աշխարհի նկատմամբ, ինչի արդյունքում դժվարությամբ են կապ հաստատում թե՛ հասակակիցների, թե՛ մեծահասակների հետ: Այս փուլում հոգեբանական աջակցության գործընթացում չափազանց կարևոր է երեխայի հետ միասին ուսումնասիրել այն բոլոր հիմնական պահանջմունքները (սիրո, անվտանգության, կարեկցանքի, հարգանքի, ընդունված լինելու, որևէ խմբին պատկանելու և այլն), մտքերը և զգացողությունները, որոնք երեխան ունեցել է, երբ կորցրել է մեծահասակների հանդեպ վստահությունը: Այս փուլի հիմնական նպատակը

[9] Социально-психологическая реабилитация детей, пострадавших от жестокого обращения.(2013). Пенза, Изд-во ПГУ. – 180с.

մեծահասակների և հասակակիցների հետ վստահելի հարաբերություններ կառուցելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումն ու զարգացումն է:

Քայլ 3. Կուտակված հույզերը խոսքային և ոչ խոսքային միջոցներով արտահայտելու հնարավորության ընձեռում

Բռնության հետևանքով երեխան բացասական հույզեր է ապրում, մասնավորապես՝ զայրույթ, վիրավորանք, վախ, ատելություն, ամոթի և մեղքի զգացում, և հաճախ միայնակ է մնում իր ապրումների հետ՝ չկարողանալով ճիշտ արձագանքել դրանց: Այս հանգամանքն է՛լ ավելի կարող է բարդացնել բռնության ենթարկված երեխայի՝ առանց այն էլ բարդ հոգեբանական վիճակը: Նման բարդացումներից խուսափելու համար կարևոր է, որ երեխան հնարավորություն ունենա խոսելու այդ հույզերի և դրանք ծնող իրավիճակների մասին: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, միշտ չէ, որ երեխան հեշտությամբ պատրաստ է խոսել այդ մասին, առավել ևս՝ երբ այդ բացասական հույզերը կապված են երեխայի համար հարազատ կամ նշանակալի անձանց հետ: Հոգեբանական աջակցության ընթացքում կարևոր է օգնել երեխային հասկանալ, որ հույզերն ընդունելի կամ անընդունելի, լավը կամ վատը չեն լինում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաների համար կարող է դժվար լինել իրենց հույզերի մասին խոսելը, որպես բացասական հույզերի արտահայտման արդյունավետ միջոցներ կարելի է կիրառել նկարչաթերապիան, խաղաթերապիան, ավազաթերապիան:

Քայլ 4. Երեխայի վախերի հաղթահարում

Բռնության ենթարկված լինելու հանգամանքը երեխայի հոգում տագնապ ու բազմաթիվ վախեր է ծնում (պատժվելու, մերժվելու, լքված լինելու և այլն): Մի շարք դեպքերում, երբ առկա են տրավմատիկ իրավիճակը հիշեցնող տարբեր ազդակներ կամ զգայություններ (ձայն, բառ, տեսարան, նկար, համ, հոտ և այլն), կարող է դիտվել երեխայի տագնապի և վախերի սրացում, խուճապային տրամադրություն, ընդդիմացում: Այս փուլում հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում լիցքաթափող վարժությունների, խաղային թերապիայի, արտթերապևտիկ հնարների կիրառումը:

Քայլ 5. Մեղքի զգացման մեղմացում

Բռնության ենթարկված երեխան, որպես կանոն, ունենում է մեղքի, ամոթի զգացում հատկապես 7-8 տարեկանից հետո, երբ սկսում է պատասխանատվություն ստանձնել իր հետ տեղի ունեցող իրադարձությունների համար: Այդ զգացումներն իրենց հերթին սրում են երեխայի տագնապները՝ խորացնելով լքված լինելու կամ մերժվելու վախերը և հանգեցնելով ինքնաքայքայիչ, ինքնավնասող վարքագծի: Այդ պատճառով անհրաժեշտ է հատուկ աշխատանք իրականացնել ամոթի և մեղքի զգացումների հաղթահարման ուղղությամբ:

Քայլ 6. Աջակցություն ագրեսիան արտահայտելու և վերահսկելու ուղղությամբ

Բռնության ենթարկված երեխան կորցնում է ապահովության զգացումը, իսկ անվտանգ իրավիճակի բացակայությունը թույլ չի տալիս երեխային՝ արտահայտելու իր իրական հույզերը: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ հոգեբանական աջակցության ընթացքում ձևավորվի ապահով ու անվտանգ միջավայր սեփական հույզերն ընդունելու, դրանք արտահայտելու, իրավիճակից ընդունելի ելք ապահովելու համար:

Քայլ 7. Ճանաչողական աղավաղումների շտկում

Բռնության հետևանքով առաջացող զգացմունքներն ու հույզերը հաճախ աղավաղում են շրջապատող իրականության և մարդկանց մասին երեխայի պատկերացումները («բոլոր մարդիկ վտանգավոր են», «պատժում է, ծեծում է, որովհետև սիրում է ինձ», «ես եմ մեղավոր» (կամ մեկ ուրիշը): Այս հանգամանքը կարող է բարդացնել նրա փոխհարաբերութունները, առաջացնել վարքային տարբեր խնդիրներ: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է աջակցել երեխային շտկելու այդ աղավաղումներն ու դրանց հետևանքները:

Քայլ 8. Աջակցություն ինքնավստահության և ինքնագնահատականի կարգավորման ուղղությամբ

Բռնության ենթարկված լինելու փաստն իր անմիջական ազդեցությունն է ունենում երեխայի ինքնագնահատականի և սեփական անձի նկատմամբ վստահության վրա: Բռնության ենթարկված երեխային տրամադրվող հոգեբանական աջակցության ընթացքում կարևոր է ձևավորել այնպիսի հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են սեփական կարծիքն արտահայտելը, «ոչ» ասելը, անձնական տարածքի գիտակցումը, թույլատրելի և անթույլատրելի հպումները տարբերակելը, սեփական անձը պաշտպանելը և այլն: Կարևոր է նաև երեխային տրամադրել առաջին օգնության հեռախոսահամարներ, որոնցով կարող է զանգահարել, երբ վտանգ է զգում կամ վտանգի մեջ է:

Կարևո՛ր է.
Երեխայի հետ հոգեբանական աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են հոգեբանի կողմից, սակայն մանկավարժների կողմից այդ աշխատանքների ընդհանուր բովանդակության ու հիմնական քայլերի հաջորդականության իմացությունը կարևոր է՝ բռնության ենթարկված երեխայի համար անվտանգ և վստահելի միջավայր ձևավորելու համար:

5.5 Բռնության ենթարկված երեխայի հետ զրույցի վարման առանձնահատկությունները

Բռնության ենթարկված երեխայի հետ վարվող զրույցն ունի երկու հիմնական նպատակ՝

1. Վստահելի հարաբերությունների ձևավորում. բռնության ենթարկված երեխայի համար դժվար է վստահել, առավել ևս դժվար է խոսել իր համար ցավոտ հարցերի շուրջ: Բացասական փորձը, ամոթի և մեղքի զգացումները, մեծահասակների բացասական արձագանքի և հնարավոր մեղադրանքների մտավախությունները կարող են դիմադրություն առաջացնել մասնագետների հետ հաղորդակցվելու հարցում: Մի շարք դեպքերում երեխան դժվարանում է խոսքայնացնել այն ամենը, ինչ տեղի է ունեցել իր հետ: Այս փուլում հատկապես կարևոր է երեխային աջակցող մասնագետի (հոգեբան, մանկավարժ, սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ) համբերատարությունն ու նրբանկատությունը: Կարևոր է նաև ակտիվ ունկնդրումը (հարցեր, վերաձևակերպումներ, ճշգրտումներ, ապրումակցում):
2. Տեղեկությունների հավաքագրում. անհրաժեշտ է տեղեկություններ հավաքել երեխայի, նրա հետաքրքրությունների, ընտանիքի, բռնության իրավիճակի մասին: Եթե մենք նշված

հարցերի վերաբերյալ արդեն ստացել ենք տեղեկություններ այլ մարդկանցից, կարևոր է զերծ մնալ այդ հարցերը երեխայի հետ քննարկելուց կամ դրանց վերաբերյալ մեր իրազեկվածությունը ցուցադրելուց, քանի դեռ երեխան ինքը չի հայտնել այդ մասին:

Կարևո՛ր է.
Երեխայի հետ զրույցի ընթացքում օգտագործել միայն այն տեղեկությունները, որոնց մասին պատմել է հենց ինքը՝ երեխան:

Այս նպատակների իրագործումը հնարավոր է միայն անվտանգ, վստահելի մթնոլորտի ապահովման դեպքում: Այդ մթնոլորտի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն այնպիսի գործոնները, ինչպիսիք են հանդիպման վայրի, խոսելաոճի, դիրքի, հաղորդակցման ոչ խոսքային միջոցների ճիշտ ընտրությունը:

Զրույցի ընթացքում ևս կարևոր է հաշվի առնել երեխայի տարիքային առանձնահատկությունները: Մինչև 7-8 տարեկան երեխաներին կարելի է առաջարկել միասին խաղալ, որից հետո կարելի է ընդհանուր հարցեր տալ ընտանիքի, ընկերների, դաստիարակների մասին և որոշակի անկաշկանդ ու վստահելի մթնոլորտում միայն բացատրել հարցեր տալու նպատակը: Եթե երեխան իրեն արդեն լավ է զգում, կարելի է նրան բացատրել հարցեր տալու հիմնական նպատակը: Ավելի մեծ տարիքի երեխաների հետ նպատակահարմար է խոսել չեզոք թեմաներից՝ դպրոց, նախասիրություններ, ընտանիք: Եթե, այնուամենայնիվ, երեխաները դժվարանում են խոսել իրենց խնդրի մասին, ապա կարելի է առաջարկել մի քանի տարբերակ[10].

- Խաղ տիկնիկներով 2-7 տարեկան երեխաների համար:
- Նկարչություն 5 տարեկանից սկսած:
- Պատմությունների ստեղծում:

Կարևո՛ր է.
Այն դեպքում, երբ բռնության փաստը հաստատված է, և բռնության ենթարկված երեխան հեշտությամբ շփման մեջ է մտնում, աշխատանքի հիմնական նպատակը պետք է լինի նրան աջակցելը՝ թույլ տալ, որ խոսի, և լսել:

[10] Зиновьева Н. О., Михайлова Н. Ф. (2003). Психология и психотерапия насилия. Ребенок в кризисной ситуации. - СПб.: Речь-248 с.

ԻՆՉՊԵ՞Ս ԵՎ Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ կարող են օգտագործվել զրույցի ընթացքում.

- ❑ ԲԱՆԱՎՈՐ կամ ԲԱՑ ՀԱՐՑԵՐ (կոնկրետ իրավիճակին վերաբերող ընդհանուր հարցեր)
- ❑ ԿԵՆՏՐՈՆԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐ (ի՞նչ, ո՞վ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս, ինչի՞ համար)
- ❑ ՈՒՂԻՂ ՀԱՐՑԵՐ

Ինչպես արդեն նշեցինք, բռնության ենթարկված երեխայի համար հաճախ չափազանց դժվար է խոսել իր ապրումների մասին, ուստի կարևոր է հաշվի առնել, որ զրույցի ընթացքում նա կարող է դադարներ վերցնել կամ լռել: Կարևոր է հասկանալ, թե ինչի մասին կարող է խոսել երեխայի/դեռահասի լռությունը հանդիպման ընթացքում.

- ➢ Երեխան շատ ուժեղ հույզեր է ապրում, որոնք իրեն խիստ ցավ ու տառապանք են պատճառում:
- ➢ Երեխան շփոթված է և չգիտի ինչ բառերով արտահայտել իր զգացմունքները:
- ➢ Երեխան ոչինչ չունի ասելու, որովհետև տվյալ պահին նա խնդիրը լուծված է համարում:
- ➢ Երեխայի լռությունը նրա դիմադրության դրսևորումն է:

Կարևո՛ր է.
Լռությունն անհրաժեշտ է հաղթահարել, բայց խորհուրդ չի տրվում դա անել կտրուկ միջոցներով: Ցանկալի չէ նաև հանդիպման ողջ ընթացքում լռելը:

Ինչպիսի՞ **իրավիճակներից** խուսափել.

- ➢ Երեխայի նկատմամբ բռնություն կիրառելու կասկածյալ անձի ներկայությամբ զրուցելուց:
- ➢ Հարցերի այնպիսի ձևակերպումներից, որոնց արդյունքում ուղղակի կամ անուղղակի պատասխանատու է դառնում երեխան/կարող է հանգեցնել կրկնակի զոհի հոգեվիճակի/:
- ➢ Երեխայի համար անապահով և ոչ անվտանգ իրավիճակում, վայրում կամ ժամանակահատվածում զրույց վարելուց:
- ➢ Ցանկացած տեսակի ճնշումից:
- ➢ Նեղ մասնագիտական եզրույթներ կամ արտահայտություններ օգտագործելուց:
- ➢ Քննադատություններից և այնպիսի հարցերից կամ արտահայտություններից, որոնք երեխան կարող է ընկալել որպես մեղադրանք և ունենալ մեղքի զգացում:

Ինչպիսի՞ **հարցերից** խուսափել[11].

- երկար նախադասություններից,
- բարդ նախադասություններից,
- կրավորական սեռից (Ի՞նչ է արվել քո կողմից),
- ժխտական նախադասություններից (Դու նրան չե՞ս ասել),
- բազմիմաստ հարցերից,
- կրկնակի ժխտումից (Մայրիկդ չի՞ ասել քեզ, որ այդ ժամին տնից դուրս չգաս),
- հռետորական հարցերից (Եթե հոգնես, ասա):

Ինչպիսի՞ հարցեր **օգտագործել.**

- ✓ համառոտ նախադասություններ,
- ✓ պարզ նախադասություններ,
- ✓ ներգործական սեռ (Ի՞նչ ես արել),
- ✓ ոչ ժխտական նախադասություններ (Դու նրան ասացի՞ր),
- ✓ միայն մեկ իմաստ ունեցող հարցեր,
- ✓ մեկ ժխտում (Մայրիկդ ասե՞լ է քեզ, որ փողոց դուրս չգաս),
- ✓ ուղիղ հարցեր (Դու հոգնե՞լ ես):

<u>Զրույցի ընթացքում անհրաժեշտ է.</u>

- Ուշադիր լսել երեխային
- Զերծ մնալ երեխային ընդհատելուց
- Պահպանել հանգստություն մեր հույզերով երեխային չվախեցնելու համար:

Կարևո՛ր է.

<u>Բռնության ենթարկված երեխայի հետ աշխատանք իրականացնելիս՝</u>

- ✓ Ընդունել երեխայի խոսելաձևը:
- ✓ Զերծ մնալ իրարամերժ հրահանգներ տալուց (վստահիր ինձ, անկեղծ եղիր/այդպիսի բառեր մի օգտագործիր/:
- ✓ Զերծ մնալ գնահատող վերաբերմունք արտահայտելուց:
- ✓ Ուշադրություն դարձնել այն վայրին, որտեղ պետք է տեղի ունենա զրույցը:
- ✓ Խոսել մեղմ ձայնով և հանգիստ խոսելաոճով:
- ✓ Զերծ մնալ երկարատև և սևեռուն տեսողական հաղորդակցությունից:
- ✓ Զերծ մնալ խոստումներ տալուց (Ես քեզ խոստանում եմ, ամեն ինչ լավ կլինի և այլն):

[11] Թումասյան Դ., Մանուկյան Տ.,«Ձեռնարկ ուսումնական հաստատությունների մանկավարժների, հոգեբանների և սոցիալական աշխատողների համար՝ ընտանիքում բռնության դեպքերին արձագանքելու և ուղղորդելու վերաբերյալ», Երևան, 2023, 29 էջ

Հավելված 1. Զարգացման 40 նախադրյալ

Զարգացման 40 նախադրյալ /5-9 տարեկան/

Արտաքին նախադրյալներ

Աջակցություն

- **Ընտանիքի աջակցություն** – Ընտանիքը շարունակում է ստեղծել սիրո և աջակցության մթնոլորտ երեխայի ֆիզիկական և էմոցիոնալ կարիքների բավարարման համար:
- **Դրական ընտանեկան շփում** - Երեխան ու իր ծնողները շփվում են ազատ, հարգալից և հաճախ են գովասանքի արժանանում որոշակի առաջարկի և արարքի համար:
- **Հարաբերություններ ուրիշ մեծահասակների հետ** - Երեխան, բացի իր ծնողներից, աջակցություն է ստանում այլ մեծահասակներից, և հարաբերություններ կառուցում նաև այլ մեծահասակների հետ:
- **Հոգատար շրջապատ** - Երեխան ու իր ծնողը/ները/ ընկերական հարբերություններ ունեն հարևանների հետ, ովքեր աջակցում և նպաստում են երեխայի զարգացմանը:
- **Հոգացող դպրոցական միջավայր** – Երեխան ունի ջերմ, բարիդրացիական փոխհարաբերություններ ուսուցչի, խնամակալների և հասակակիցների հետ:
- **Ծնողի ներգրավվածությունը դպրոցում** – Ծնող(ներ)ը պատմում է (են) երեխայի կրթության կարևորության մասին և ակտիվ ընդգրկում նրան մանկական միջոցառումներին:

Հզորացում

- **Համայնքն արժևորում է երեխային** - Երեխան ընդունված և ընդգրկված է համայնքի կյանքում:
- **Երեխաները՝ որպես ռեսուրս** – Երեխան նպաստում է ընտանիքում որոշումների կայացմանը և հնարավորություն ունի մասնակցելու համայնքային միջոցառումներին:
- **Օգտակար լինել համայնքում** – Երեխան հնարավորություն ունի օգնելու համայնքին ծնողների աջակցությամբ և թույլտվությամբ:
- **Ապահովություն** – Ծնողները և համայնքի մեծահասակները վստահ են, որ երեխան անվտանգ է՝ հաշվի առնելով երեխայի ինքնուրույնությունը:

Սահմաններ և ակնկալիքներ

- **Սահմաններ ընտանիքի ներսում** – Ընտանիքը ապահովում է հետևողական վերահսկողություն, ունի վարքի ընդունելի մոդել և միշտ տեղյակ է՝ որտեղ է երեխան:
- **Սահմաններ դպրոցի ներսում** - Դպրոցն ունի հստակ, պարզ կանոններ ու վերահսկողություն:
- **Սահմաններ համայնքի ներսում** – Հարևանները և ընկերների ծնողները օգնում են վերահսկելու երեխայի վարքը և ապահովում են հետադարձ կապ ծնողների հետ:
- **Մեծահասակի դերի մոդելը** - Ծնողների և մեծահասակների դրական օրինակը, պատասխանատու վարքը նպաստում են, որ երեխան հետևի այդ օրինակին:
- **Դրական հասակակցի կարևորությունը** - Ծնողները վերահսկում են երեխայի ընկերներին և խրախուսում ժամանակ անցկացնելու նրանց հետ, ովքեր ունեն դրական օրինակ:

- **Բարձր սպասելիքներ -** Ծնողները, ուսուցիչները և այլ կարևոր մեծահասակներ խրախուսում են երեխային լավ կատարել առաջադրանքը և նշել հաջողությունները:

Ժամանակի արդյունավետ օգտագործում

- **Ստեղծագործականության զարգացում** - Երեխան մասնակցում է երաժշտության, պարի կամ արվեստի այլ տեսակների խմբակի դպրոցից դուրս:
- **Հոգևոր համայնք** - Երեխան մասնակցում է իրեն համապատասխանող հոգևոր գործունեությանը և հոգատար վերաբերմունքի արժանանում քրիստոնեական զարգացման համար:
- **Տանն անցկացրած ժամանակը** - Երեխան ընտանիքի հետ միասին ժամանակ է տրամադրում խաղալուն և օգտակար աշխատանքին:

Ներքին նախադրյալներ

Նվիրված ուսուցում

- **Հաջողությունների հասնելու մոտիվացիա** - Ծնող/ներ/ը խրախուսում է/են երեխային պահպանել կանոնները և լինել արդար բոլորի նկատմամբ:
- **Զբաղվածությունը դպրոցում** - Երեխան ոգևորված է կրթությամբ և հաճույք է ստանում դպրոց հաճախելուց:
- **Տնային աշխատանք** - Առանց ծնող/ներ/ի աջակցության երեխան կատարում է տնային առաջադրանքները:
- **Կապը դպրոցի հետ** - Խրախուսվում է երեխայի՝ դպրոցին պատկանելու զգացողություն ունենալը:
- **Կարդալ հաճույքի համար** - Երեխան լսում կամ կարդում է գրքեր դպրոցից դուրս ամեն օր:

Դրական արժեքներ

- **Հոգատարություն** – Ծնող/ներ/ը օգնում է/են երեխային զարգացնել էմպատիան/ապրումակցումը, օգնել և հասկանալ այլ մարդկանց:
- **Սոցիալական հավասարություն -** Ծնող/ներ/ը խրախուսում են երեխային լինել իրազեկված իրավունքների մասին և արդար բոլորի նկատմամբ:
- **Ամբողջականություն -** Ծնող/ներ/ը օգնում է/են երեխային զարգացնել դրական կամ, առհասարակ, իրավիճակին համապատասխան վարքագիծ:
- **Ազնվություն -** Ծնող/ներ/ը խրախուսում է/են երեխային ճանաչել և ասել ճշմարտությունը:
- **Պատասխանատվություն** - Ծնող/ները խրախուսում է/են երեխային պատասխանատվություն ստանձնելու տանը և դպրոցում իր գործողությունների համար:
- **Զսպվածություն** – Ծնող/ներ/ը խրախուսում է/են երեխայի աճը՝ վերահսկելով նրա հույզերը և վարքը, հասկանալով առողջ ապրելու և ընտրության սովորությունները:

Սոցիալական ունակություններ

- **Պլանավորում և որոշումների ընդունում** - Ծնող/ներ/ը օգնում է/են երեխային մտածել և պլանավորել դպրոցական և խաղային գործունեությունը:

- **Միջանձնային ունակություններ** – Երեխան ընկերներ է փնտրում, որի ընթացքում սովորում է ինքնատիրապետում:
- **Մշակութային ունակություններ և իրազեկվածություն** - Երեխան շարունակում է մշակութային ինքնանույնականացումը, խրախուսվում է այլ ազգի, էթնիկ մշակութային ենթախմբերի երեխաների հետ դրական շփումը:
- **Դիմակայելու ունակություններ** - Երեխան սովորում է ճանաչել իրավիճակի ռիսկերը և վտանգները և հնարավորինս ակնկալել օգնություն վստահելի մեծահասակներից:
- **Կոնֆլիկտի խաղաղ լուծում** - Երեխան շարունակում է սովորել լուծել խնդիրները առանց ծեծի, զայրույթի պոռթկումների կամ վիրավորական խոսքեր օգտագործելու:

Դրական սահմանում

- **Անձնական ուժ** - Երեխայի մոտ զարգանում է իր կյանքում կատարվող իրադարձությունների վրա ներգործելու զգացումը:
- **Ինքնագնահատական** - Երեխան սիրում է իր անձը և իրեն գնահատված զգում այլ մարդկանց կողմից:
- **Նպատակի զգացում** - Երեխան ողջունում է նոր փորձառությունները և պատկերացնում, թե ինչպիսին պետք է լինի ապագայում:
- **Ապագայի հանդեպ դրական տրամադրվածություն** - Երեխան ունի զարգացող հետաքրքրություն աշխարհի նկատմամբ և փորձում է որոշել իր տեղն այդ աշխարհում:

Զարգացման 40 նախադրյալ /8-12 տարեկան/

Արտաքին նախադրյալներ

Աջակցություն

- **Ընտանիքի աջակցություն** – Ընտանեկան կյանքը ապահովում է սեր և հոգատարություն:
- **Դրական ընտանեկան շփում** - Երեխան ու իր ծնողները նորմալ շփվում են, երեխան ծնողներին է դիմում խորհրդի համար:
- **Հարաբերություններ ուրիշ մեծահասակների հետ** - Երեխան, բացի ծնող(ներ)ից, աջակցություն է ստանում նաև այլ մեծահասակներից:
- **Հոգատար շրջապատ** - Երեխան զգում է, որ իր հարևանները հոգատար են իր նկատմամբ:
- **Հոգացող դպրոցական միջավայր** – Փոխհարաբերությունները ուսուցչի և հասակակիցների հետ ստեղծում են հոգատար, խրախուսող միջավայր:
- **Ծնողի ներգրավվածությունը դպրոցում** – Ծնող(ներ)ը ակտիվորեն ներգրավված է/են երեխային օգնելու դպրոցում հաջողությունների հասնելու գործում:

Հզորացում

- **Համայնքն արժևորում է երեխային** - Երեխան զգում է, որ արժևորված ու գնահատված է համայնքի մեծահասակների կողմից:
- **Երեխաները որպես ռեսուրս** – Երեխան ընդգրկված է որոշումների կայացման գործընթացին տանը և համայնքում:

- **Օգտակար լինել համայնքին** - Երեխան հնարավորություն ունի օգնելու համայնքի այլ մարդկանց:
- **Ապահովություն** - Երեխան ապահով է զգում իրեն տանը, դպրոցում և համայնքում:

Սահմաններ և ակնկալիքներ

- **Սահմաններ ընտանիքի ներսում** – Ընտանիքն ունի հստակ կանոններ և վերահսկում է երեխայի գործողությունները:
- **Սահմաններ դպրոցի ներսում** - Դպրոցն ունի հստակ կանոններ ու կարևորություն:
- **Սահմաններ համայնքի ներսում** – Հարևաններն ունեն պարտականություն վերահսկելու երեխայի վարքը:
- **Մեծահասակները որպես օրինակ** - Երեխայի ընտանիքը՝ ծնողները և մեծահասակները, ինչպես նաև այլ մեծահասակները դրական օրինակ են և դրսևորում են պատասխանատու վարք:
- **Դրական հասակակցի կարևորությունը** - Երեխայի մտերիմ ընկերները դրական օրինակ են և դրսևորում են պատասխանատու վարք:
- **Բարձր սպասելիքներ -** Ծնողները և ուսուցիչները ակնկալում են երեխայից ամենալավ աշխատանքը դպրոցում և այլ գործողություններում:

Ժամանակի արդյունավետ օգտագործում

- **Ստեղծագործական գործողություններ** - Երեխան մասնակցում է երաժշտական, թատերական կամ արվեստի այլ տեսակի խմբակներին շաբաթական երկու կամ ավելի ժամ:
- **Երեխաների ծրագրեր** - Երեխան շաբաթական երկու կամ ավելի ժամ անցկացնում է դպրոցի ակումբներում կամ մասնակցում համայնքի կողմից երեխաների համար իրականացվող ծրագրերին:
- **Հոգևոր համայնք** - Երեխան մասնակցում է կրոնական ծրագրերի կամ ծառայությունների շաբաթական մեկ կամ ավելի ժամ:
- **Տանը անցկացրած ժամանակը** - Երեխան ընկերների հետ ժամանակ է անցկացնում դրսում՝ դրան տրամադրելով շաբաթական երկու կամ պակաս երեկո:

Ներքին նախադրյալներ

Նվիրված ուսուցում

- **Հաջողությունների հասնելու մոտիվացիա** - Երեխան շահագրգռված է և փորձում է դպրոցում լավ սովորել:
- **Զբաղվածությունը դպրոցում** - Երեխան ամենայն պատասխանատվությամբ զբաղվում է ուսմամբ դպրոցում և մասնակցում կրթական գործունեությանը դպրոցից դուրս:
- **Տնային աշխատանք** - Երեխան սովորաբար տնային աշխատանքը կատարում է ժամանակին:
- **Կապը դպրոցի հետ** - Երեխան հոգ է տանում դպրոցի ուսուցիչների և այլ մեծահասակների մասին:

- **Կարդալ հաճույքի համար** - Երեխան իր հաճույքի համար կարդում է շաբաթական մի քանի օր:

Դրական արժեքներ

- **Հոգատարություն** – Ծնողները խոսում են երեխայի հետ ուրիշներին օգնելու կարևորության մասին:
- **Սոցիալական հավասարություն** - Ծնողները խոսում են երեխայի հետ բոլոր մարդկանց հավասար իրավունքների, հարգանքի կարևորության մասին:
- **Ամբողջականություն** - Երեխան գործում է և պնդում իր համոզմունքը:
- **Ազնվություն** - Ծնողները խոսում են երեխայի հետ ճշմարտությունն ասելու կարևորության մասին:
- **Պատասխանատվություն** – Ծնողները խոսում են երեխայի հետ պարտավորություններ ստանձնելու և անձնական պարտականությունները կատարելու կարևորության մասին:
- **Զսպվածություն** – Ծնողները խոսում են երեխայի հետ առողջ ապրելակերպի սկզբունքները հասկանալու և առողջ սեռական կյանքի կարևորության մասին:

Սոցիալական ունակություններ

- **Պլանավորում և որոշումների ընդունում** - Երեխան մտածում է իր կայացրած որոշումների մասին և ուրախանում որոշումների արդյունքներով:
- **Միջանձնային ունակություններ** – Երեխան հոգ է տանում և զգայուն է այլ մարդկանց զգացմունքների նկատմամբ, նրանց հետ ընկերանում է և երբ ճնշված է, դիմում է նրանց:
- **Մշակութային ունակություններ** - Երեխան հասկանում և կարողանում է շփվել այլ մշակույթի/ռասայի/էթնիկ պատկանելության մարդկանց հետ:
- **Դիմակայելու ունակություններ** - Երեխան կարողանում է հեռու մնալ մեծահասակներից, ովքեր նրանց վտանգների մեջ են ներգրավում, և ասում «ՈՉ» սխալ կամ վտանգավոր իրավիճակում:
- **Կոնֆլիկտի խաղաղ լուծում** - Երեխան միջոցներ է փնտրում կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու:

Դրական սահմանում

- **Անձնական ուժ** - Երեխան զգում է, որ կարող է կառավարել այն ամենը, ինչ տեղի է ունենում իր հետ կամ վերաբերում է իրեն:
- **Ինքնագնահատական** - Երեխան ունի ինքնասիրություն:
- **Նպատակի զգացում** - Երեխան երբեմն մտածում է, թե ինչ է կյանքը, և որն է իր կյանքի նպատակը:
- **Ապագայի հանդեպ դրական տրամադրվածություն** - Երեխան դրական է տրամադրված իր ապագայի հանդեպ:

Զարգացման 40 նախադրյալ /12-18 տարեկան/

Արտաքին նախադրյալներ

Աջակցություն

- **Ընտանիքի աջակցություն** – Ընտանեկան կյանքը ապահովում է սեր և հոգատարություն:
- **Դրական ընտանեկան շփում** - Երեխան ու իր ծնողները նորմալ շփվում են, և երեխան ծնողներին է դիմում խորհրդի համար:
- **Հարաբերություններ ուրիշ մեծահասակների հետ** - Երեխան, բացի ծնող(ներ)ից, աջակցություն է ստանում նաև այլ մեծահասակներից:
- **Հոգատար շրջապատ** - Երեխան զգում է, որ իր հարևանները հոգատար են իր նկատմամբ:
- **Հոգացող դպրոցական միջավայր** – Դպրոցը ապահովում է հոգատար և խրախուսող միջավայր:
- **Ծնողի ներգրավվածությունը դպրոցում** – Ծնող(ներ)ը ակտիվորեն ներգրավված է/են երեխային օգնելու դպրոցում հաջողությունների հասնելու գործում:

Հզորացում

- **Համայնքն արժևորում է երեխային** - Երեխան զգում է, որ արժևորված ու գնահատված է համայնքի կողմից:
- **Երեխաները որպես ռեսուրս** – Երեխաներին կարևոր/օգտակար դերեր են հատկացվում համայնքում:
- **Օգտակար լինել համայնքին** - Երեխան աշխատանքներ/ծրագրեր է իրականացնում՝ ծառայելով համայնքին շաբաթական մեկ կամ ավելի ժամ:
- **Ապահովություն** - Երեխան ապահով է զգում իրեն տանը, դպրոցում և համայնքում:

Սահմաններ և ակնկալիքներ

- **Սահմաններ ընտանիքի ներսում** – Ընտանիքն ունի հստակ կանոններ և վերահսկում է երեխայի գործողությունները:
- **Սահմաններ դպրոցի ներսում** - Դպրոցն ունի հստակ կանոններ: Սահմանված են համապատասխան հետևանքներ կանոններին չհետևելու դեպքում:
- **Սահմաններ համայնքի ներսում** – Հարևաններն ունեն պարտականություն վերահսկելու երեխայի վարքը:
- **Մեծահասակները որպես օրինակ** - Երեխայի ընտանիքը՝ ծնողները և մեծահասակները, ինչպես նաև այլ մեծահասակները դրական օրինակ են և դրսևորում են պատասխանատու վարք:
- **Դրական հասակակցի կարևորությունը** - Երեխայի մտերիմ ընկերները դրական օրինակ և պատասխանատու վարք են դրսևորում:
- **Բարձր սպասելիքներ** - Ծնողները և ուսուցիչները ակնկալում են երեխայից ամենալավ աշխատանքը դպրոցում և այլ գործողություններում:

Ժամանակի արդյունավետ օգտագործում

- **Ստեղծագործական գործողություններ** - Երեխան մասնակցում է երաժշտական, թատերական կամ արվեստի այլ տեսակի խմբակներին շաբաթական երեք կամ ավելի ժամ:
- **Երիտասարդական ծրագրեր** - Երեխան շաբաթական երեք կամ ավելի ժամ անցկացնում է դպրոցի, սպորտային ակումբներում կամ մասնակցում համայնքի կողմից երեխաների համար իրականացվող ծրագրերին:
- **Հոգևոր համայնք** - Երեխան մասնակցում է կրոնական ծրագրերի կամ ծառայությունների շաբաթական մեկ կամ ավելի ժամ:
- **Տանն անցկացրած ժամանակը** - Երեխան ընկերների հետ ժամանակ է անցկացնում դրսում՝ դրան հատկացնելով շաբաթական երկու կամ պակաս երեկո:

Ներքին նախադրյալներ

Նվիրված ուսուցում

- **Հաջողությունների հասնելու մոտիվացիա** - Երեխան շահագրգռված է և փորձում է դպրոցում լավ սովորել:
- **Զբաղվածությունը դպրոցում** - Երեխան ակտիվորեն նեգրավված է կրթական գործընթացին:
- **Տնային աշխատանք** - Երեխան փաստում է, որ առնվազն օրը մեկ ժամ հատկացնում է տնային աշխատանքների կատարմանը:
- **Կապը դպրոցի հետ** - Երեխան հոգ է տանում իր դպրոցի մասին:
- **Կարդալ հաճույքի համար** - Երեխան հաճույքի համար կարդում է երեք և ավելի ժամ շաբաթվա մեջ:

Դրական արժեքներ

- **Հոգատարություն** – Երեխան կարևորում է ուրիշներին օգնելը:
- **Սոցիալական հավասարություն** – Երեխան կարևորում է արդարության սկզբունքները, հավասարությունը, իր հնարավորությունների սահմաններում պայքարում է աղքատության նվազեցման համար:
- **Ամբողջականություն** - Երեխան գործում է և պնդում իր համոզմունքը:
- **Ազնվություն** – Երեխան ճշմարիտ է անգամ այն դեպքում, երբ ճշմարիտ լինելը հեշտ չէ:
- **Պատասխանատվություն** – Երեխան անձնական պարտավորություններ է ստանձնում:
- **Զսպվածություն** – Երեխան համոզված է, որ պետք չէ ակտիվ սեռական կյանքով ապրել, ալկոհոլ կամ թմրանյութ օգտագործել:

Սոցիալական ունակություններ

- **Պլանավորում և որոշումների ընդունում** - Երեխան գիտի՝ ինչպես ինչ-որ բան պլանավորել և որոշումներ կայացնել:
- **Միջանձնային ունակություններ** – Երեխան հոգ է տանում և զգայուն է այլ մարդկանց զգացմունքների նկատմամբ, ունի ընկերանալու հմտություններ:

- **Մշակութային ունակություններ** - Երեխան հասկանում է և կարողանում է շփվել այլ մշակույթի/ռասայի/էթնիկ պատկանելության մարդկանց հետ:
- **Դիմակայելու ունակություններ** - Երեխան կարողանում է դիմակայել հասակակիցների վատ ազդեցությանը:
- **Կոնֆլիկտի խաղաղ լուծում** - Երեխան միջոցներ է փնտրում կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու:

Դրական սահմանում

- **Անձնական ուժ** - Երեխան զգում է, որ կարող է կառավարել այն ամենը, ինչ տեղի է ունենում իր հետ կամ վերաբերում է իրեն:
- **Ինքնագնահատական** - Երեխան ունի բարձր ինքնագնահատական:
- **Նպատակի զգացում** - Երեխան փաստում է, որ իր կյանքն ունի նպատակ:
- **Ապագայի հանդեպ դրական տրամադրվածություն** - Երեխան դրական է տրամադրված իր ապագայի հանդեպ:

Հավելված 2. Երեխաների պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի ցանկը

Երեխաների պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի ցանկը ներառում է

- ՀՀ Սահմանադրություն
- Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենք (29.05. 1996 թ)
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք (09.11.2004 թ)
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք (09.11.2004 թ)
- ՀՀ քրեական օրենսգիրք (05.05.2021 թ)
- Կրթության մասին ՀՀ օրենք (14.04.1999 թ)
- Հանրակրթության մասին ՀՀ օրենք (10.07.2009 թ)
- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենք (24.09.2002 թ)
- Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք (17.12.2014 թ)
- Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք (07.05.2002 թ)
- Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին ՀՀ օրենք (13.12.2017թ)
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության մասին» N 1044-Ն որոշում
- «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97 օրենք
- ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն որոշում
- ՀՀ Վարչապետի 2021 թվականի փետրվարի 26-ի N 172-Լ որոշում
- ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 571-Ն հրաման
- Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրություն
- ՀՀ մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրություն
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 88-Ն հրաման

Քաղվածքներ հիմնական օրենսդրական փաստաթղթերից

Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք[12]

Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:

Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք:

- Պետությունն ու նրա համապատասխան մարմինները (այդ թվում նաև ուսումնական հաստատությունը) ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար:
- Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) **<u>բռնությունից պաշտպանության իրավունք</u>**:
- Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, **արգելվում է երեխային ենթարկել բռնության** կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:
- Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում **խախտողը պատասխանատվություն է կրում** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- **<u>Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն</u>** (այդ թվում նաև ուսումնական հաստատությունը) **<u>իրականացնում են երեխայի պաշտպանությունը</u>** ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից:
- **Արգելվում է** երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:
- **Արգելվում է** երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը:

[12] Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165162

ՀՀ ընտանեկան օրենսգիրք[13]

- Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

ՀՀ ընտանեկան օրենսգրքով ամրագրված է ծնողների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը: Կարևոր է կրթական հաստատության համագործակցությունը երկու ծնողների հետ հավասարապես, բնականաբար այն պարագաներում, երբ երեխան ունի երկու ծնող:

- Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:
- Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:
- Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների կրթության մասին:
- Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը:
- Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ:
- Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան:
- Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը:
- Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն ֆիզիկական կամ հոգեբանական բռնությունը որպես դաստիարակության միջոց կիրառելը, ինչպես նաև նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:
- Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Ծնողական իրավունքներից զրկելը

- Երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝
- դաժանաբար են վարվում երեխայի հետ, մասնավորապես՝
- ա. պարբերաբար այնպիսի ֆիզիկական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, որը չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ,
- բ. պարբերաբար հոգեբանական բռնություն են գործադրում նրա նկատմամբ, այն է՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական,

[13] ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66138

սեռական բռնություն գործադրելու սպառնալիքը, արժանապատվության պարբերական նվաստացումը:

Բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձի պաշտպանության կազմակերպման գործընթացում ներգրավված հիմնական կառույցներն ըստ օրենքի՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը
- Ոստիկանությունը
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարությունը
- ՀՀ առողջապահության նախարարությունը
- Խնամակալության և հոգաբարձության մարմինները
- Ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցներ, այդ թվում՝ աջակցության կենտրոնները և ապաստարանները
- Տեղական ինքնակառավարման մարմինները
- Մարզպետարանները և նրանց ենթակայության տակ գտնվող համապատասխան մարմինները:

Ընտանիքում անձի նկատմամբ բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձի պաշտպանության կազմակերպման՝ պետականորեն սահմանված սկզբունքները.

- ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգության և պաշտպանության ապահովման առաջնայնություն,
- ընտանիքին աջակցություն, համերաշխության վերականգնում,
- երեխայի լավագույն շահի առաջնահերթություն,
- իրավահավասարություն և խտրականության արգելք,
- արդարադատության մատչելիություն,
- ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների անձեռնմխելիություն,
- ՏԻՄ և ՔՀ միջև համագործակցության ապահովում:

Հավելված 3. ԵՀԲ մասին հաղորդման գործընթացի գծապատկերի օրինակ



Հավելված 4. ԵՀԲ դեպքերի արձագանքման պատրաստվածության պլանի օրինակ

Ուսումնական հաստատություններում երեխաների հանդեպ բռնության դեպքերի արձագանքման պատրաստվածության պլան

h/h	ԵՀԲ դեպքերի կառավարման ոլորտ	Ոլորտը ուժեղացնելուն միտված գործողություններ	Ժամկետ	Պատասխանատու	Անհրաժեշտ ռեսուրսներ, պահանջվող աջակցություն
1	Խոցելի և ռիսկային իրավիճակների, երեխաների հանդեպ բռնության (ԵՀԲ) դեպքերի մասին հայտնելու/ տեղեկացնելու երեխայակենտրոն մեխանիզմների ներդրում ուսումնական հաստատությունում	• Նշանակել երեխաների պաշտպանության (ԵՊ) գծով պատասխանատու: • Ձևավորել ԵՊ փորձագիտական խումբ՝ աջակցելու ԵՊ պատասխանատուին աշխատելու ԵՀԲ դեպքերի շուրջ: • Համագործակցելով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության (ՄՀԱԾ) հետ՝ մշակել երեխայակենտրոն ձևաչափ (մատչելի/ընդունելի աղջիկների, տղաների, այդ թվում նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար)՝ ԵՀԲ ռիսկային կամ առկա դեպքերի մասին երեխաների կողմից հայտնելու համար: • Իրականացնել երեխաների և նրանց ընտանիքների համար ծառայություններ մատուցողների քարտեզագրում: • Մշակել և ներդնել ԵՀԲ դեպքերի մասին հայտնելու նեքին գործընթացի ծրագիր: • Տպագրել և բոլոր ուսուցիչներին բաժանել ներքին գործընթացի սխեման ԵՀԲ դեպք հայտնաբերելիս ձեռնարկվող քայլերի մասին:	Մինչև սեպտեմբերի 1-ը	Ուսումնական հաստատության տնօրեն	Տնօրենի կողմից սխեմայի հաստատում Տպագրության հետ կապված ծախսեր
2	ԵՀԲ դեպքերի մասին տեղեկությունների կառավարում և	• Ստեղծել Excel ֆայլ դժվարին իրավիճակներում գտնվող, տարբեր տեսակի բռնության զոհ դարձած երեխաների մասին տեղեկատվությունը հավաքագրելու համար՝ ապահովելով ինֆորմացիայի պահպանման անվտանգությունը:	Մինչև սեպտեմբերի 10-ը	ԵՊ պատասխանատու	Համակարգիչ

	տվյալների վերլուծություն	• Տվյալների բազայում հավաքագրել նաև տեղեկություններ երեխաների պաշտպանության ուղղությամբ իրականացվող միջոցառումների վերաբերյալ: • Նշանակել պատասխանատու տվյալների բազան կառավարելու համար: • Կատարել դեպքերի հավաքագրում հնարավորինս մանրամասն տեղեկություններով (սեռ, տարիք, բռնության սուբյեկտ, բռնության վայր, բռնության տեսակ, հաշմանդամության առկայություն և այլն): • Պատրաստել եռամսյակային հաշվետվություններ, վերլուծելով տվյալները, և տվյալների հիման վրա առաջարկություններ կատարել ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստերին ուսումնական հաստատությունում երեխաների պաշտպանությանն ուղղված միջոցառումները խթանելու ուղղությամբ:			
3	Խոցելի և ռիսկային իրավիճակների, երեխաների հանդեպ բռնության կանխարգելում	• Կազմակերպել աշխատողների և սովորողների վերապատրաստում երեխայի բարեկեցության համար ռիսկային իրավիճակները, երեխաների հանդեպ բռնության դեպքերը ճանաչելու և արձագանքելու վերաբերյալ: • Յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպել միջոցառումներ, որոնք ուժեղացնում են երեխաների՝ սեփական ապահովությանն ուղղված կարողություններն ու գիտելիքները, որպեսզի երեխաները կարողանան պաշտպանել իրենք իրենց և ի վիճակի լինեն արձագանքել բռնությանը: • Յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպել հանդիպումներ ոստիկանության տեսուչի և բարձր դասարանի երեխաների հետ՝ քննարկելու ալկոհոլի չարաշահմանը,	Կիսամյակային	ԵՊ պատասխանատու, Աշակերտական/ Ծնողական խորհուրդ, Դպրոցի հոգեբան	Միջոցառումներ, վերապատրաստումների կազմակերպման հետ կապված ծախսեր Վերապատրաստող փորձագետներին ներգրավելու հետ կապված ծախսեր

		թմրանյութերի օգտագործմանը և բռնությանը վերաբերող թեմաները: • Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել ծնողավարության դասընթացներ բոլոր դասարանների ծնողների համար: • Ուսումնական տարվա ընթացքում աշակերտական խորհուրդների համար կազմակերպել վերապատրաստումներ մասնակցային կարողությունների զարգացման, ծրագրերի մշակման և իրականացման վերաբերյալ:			
4	Խոցելի և ռիսկային իրավիճակների, երեխաների հանդեպ բռնության վաղ հայտնաբերում	• Տպագրել/տարածել տեղեկատվական նյութեր ԵՊ վերաբերյալ: • Ժողովների ժամանակ տեղեկացնել անձնակազմին, երեխաներին և նրանց ծնողներին, թե ում և ինչպես դիմել՝ ԵՀԲ դեպքի մասին տեղեկանալով: • Կազմակերպել կիսամյակային քննարկումներ 12 տարեկանից բարձր աշակերտների հետ՝ լսելու երեխաների կարծիքը և ապահովելու նրանց մասնակցությունը ուսումնական հաստատությունում անվտանգ և բռնությունից պաշտպանված միջավայր ստեղծելու գործընթացում:	Կիսամյակային	ԵՊ պատասխանատու	Տպագրության հետ կապված ծախսեր Քննարկումները վարող փորձագետներին ներգրավելու հետ կապված ծախսեր
5	Միջգերատեսչական համգործակցության ուժեղացում, դեպքերի համապատասխան ուղղորդում	• Կապ հաստատել քարտեզագրված ծառայություններ մատուցողների ներկայացուցիչների հետ և, նրանց հետ համագործակցելով, կազմել կոնտակտային տվյալների ցանկ: • Կանոնավոր մասնակցություն ապահովել Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) կողմից կազմակերպվող ԵՀԲ դեպքերի շուրջ կազմակերպվող աջակցման ցանցի աշխատանքներին, հատկապես եթե տվյալ դպրոցի սովորողին առնչվող հարցի քննարկում է նախատեսվում:	Ըստ գրաֆիկի	ԵՊ պատասխանատու	Տրանսպորտային ծախսեր Համատեղ գործողությունների պլանի մեջ նախատեսված միջոցառումների

		• Կանոնավոր մասնակցություն ապահովել ՄՍԾ-ի կողմից կազմակերպվող Համակարգող խորհրդի աշխատանքներին, մասնավորապես տարածքային սոցիալական ծրագրերի մշակմանը և իրականացմանը: • Անհրաժեշտության դեպքում ՄՍԾ-ի, ՄՀԱԾ-ի, համայնքային սոցիալական աշխատողի և ոստիկանության դպրոցական տեսուչների հետ կազմել և իրականացնել համատեղ գործողությունների ծրագիր:			իրականացման հետ կապված ծախսեր